




Գյուղական պրոտոռդուկցիոն

Ուսումնամեթոդական ձեռնարկ





Project funded by the
EUROPEAN UNION



Promoting Innovative Rural Tourism
in Black Sea Basin Region



Ծրագրի անվանումը՝ Նորսրարական ԳՅՈՒՂԱԿԱՆ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԽՐԱՍՏԻՄ
ՍԵՎԾՈՎՅԱՆ ԱՎԱԶԱՆԻ ՏԱՐԱԾՇՐՋԱՍԼՈՒ

Սույն ծեռնարկը պատրաստվել է Եվրոպական միության աջակցությամբ: Զեռնարկի բովանդակության համար պատասխանատվությունը է կրում միայն ՀԵՖԵՔ Փրոցեքք հնքերնեյշնը հայաստանյան մասնաճյուղը, և այն որևէ ծնուզ չի արտահայտում Եվրոպական միության տեսակետները:

Եվրահանձնաժողովը ԵՄ գործադիր մարմինն է:

Եվրամիությունն ունի 28 անդամ երկիր, որոնք որոշել են աստիճանաբար կապակցել իրենց նոու-հաուն, ռեսուրսներն ու ուղիները: 50 տարվա ընդարձակման ժամանակաշրջանում նրանք միասին ստեղծել են կայունության, ժողովուավարության ու կայուն զարգացման տարածք՝ պահպանելով մշակութային զանազանությունը, հանդուժողականությունը և յուրաքանչյուրի անկախությունը: Եվրամիությունը հանձնառու է կիսել իր ծեռքերումներն ու արժեքները իր սահմաններից այն կողմանվող երկրների ու ժողովուրդների հետ:

ԳՅՈՒՂԱԿԱՆ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ

ՈՒՍՈՒՄՆԱՌԵՐՈՂԱԿԱՆ ՀԵՌԱՐԿ

Ընդհանուր սահմաններ: Ընդհանուր լուծումներ:

www.blacksea-cbc.net

Սկզբուան ավագանի ծրագիրը համաֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից
Եվրոպական հարևանության և գործընկերության գործիքի միջոցով:



Զենարկի մշակման համակարգող և կազմող՝ Անահիտ Ոսկանյան
Խմբագիր՝ Լուսնե Նայրապետյան
Գաղափարի հեղինակ՝ Անահիտ Ղազանչյան

Այս հրապարակումը միտված է գրոսաշրջության ոլորտի կրթական հաստատությունների, շահագրդիո կազմակերպությունների և աճանց ուշադրությանը ներկայացնել ներկայում մեծ արդիականություն վայելող գյուղական գրոսաշրջության կարևորությունը:

Զենարկում ներկայացված են գյուղական գրոսաշրջության կամակերպման առանձնահատկությունները, կայց մի շաք գրոսաշրջության տեսակների հետ, գյուղական գրոսաշրջության մեջ ներգրավված անհրաժեշտ ռեսուրսներն ու ենթակառուցվածքները, համապատ այս տեսակի հետ գորգորովող տարատնակ գրադարանները, սպասարկող անձնակազմին ներկայացվող պահանջները և այլն:

Զենարկը մշակել է գրոսաշրջության ոլորտում առկա միջազգային նորմերին և սկզբունքներին համահումը, գյություն ունեցող ժամանակակից օտարակեզր գրականության ուսումնաժողովության, վերլուծության և ամփոփման հիման վրա՝ հաշվի առնելով վերջին ժամանակներում ոլորտում տեղի ունեցող առաջընթացն ու փոփոխությունները:

Զենարկը նախատեսված է գրոսաշրջության ոլորտի կրթական հաստատությունների, ոլորտում ուսումնաժողովություններ և նորարարական ծրագրեր մշակողների համար: Այն կարող է կիրառել ինեն գյուղական համայնքների, գրոսաշրջային կազմակերպությունների, հյուրատների աշխատողների և ոլորտում գործունեություն ծավալող այլ անձանց համար:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ



Ույն ձեռնարկը միտված է գյուղական գրոսաշրջության՝ ներկայում մեծ արդիականություն վայելող տեսակի կազմակերպման առանձնահատկությունների բացահայտմանը և մեթոդաբանական հիմքերի հանրայնացմանը:

Զրոսաշրջության ոլորտն եական դերակատարություն ունի նոր տարածաշրջանների տընտեսական յուրացման գործում և նման գործառույթն էլ ուղղորդելով դեպի գյուղական միջավայր՝ արդյունավետ կերպով հնարավոր է զարկ տալ այդ տարածքներում գրոսաշրջության հետ առնչվող տնտեսության մի շաք ոլորտների առաջընթացին: Հարկ է նշել, որ այսօր գրոսաշրջության ոլորտը աշխարհի ամենախոշոր և մրցունակ ծառայություններ մատուցող ոլորտներից մեկն է համարվում:

Զրոսաշրջության վերաբերյալ տեղեկատվության նկատմամբ պահանջարկն առկա է ոչ միայն կրթական հաստատություններում, այլև տնտեսության այն առանձին հատվածներում, որոնք որոշ չափով առնչվում են հյուրժնկալման ոլորտի հետ: Նման շահագրգիռ

Զնայած գրոսաշրջության ոլորտի աննախադեպ զարգացումներին այս ոլորտում տեսական մշակումները շարունակաբար են են մուտքագրական գործունեության զարգացման տեմպերից:

հատվածները կարիք ունեն այնպիսի տեղեկատվության, որը վերաբերում է հատկապես գրոսաշրջության առանձին ուղղությունների որոշակի շրջանակներին:

Գյուղական գրոսաշրջության վերաբերյալ հայերենով ամբողջական և համապարփակ տեղեկատվություն ունենալու պահանջարկը հանգեցրեց այս ձեռնակի ստեղծմանը, որը կարող է օգտագործվել թե՛ տեսական ուսումնասիրություններ կատարելու համար, թե՛ պրակտիկ-կառավարչական, ձեռնարկատիրական և այլ նպատակներով:

Ուղեցույցի վերնագիրն է «Գյուղական գրոսաշրջություն»: Գրքում ներկայացված է գյուղական գրոսաշրջության եռթյունը, առանձնահատկությունները, կապը մի շարք գրոսաշրջության տեսակների հետ, գյուղական գրոսաշրջության մեջ ներգրավված անհրաժեշտ ռեսուրսներն ու ենթակառուցվածքները, հանգստի այս տեսակի հետ գուգորդվող տարատեսակ գրադմունքները, սպասարկող անձնակազմին ներկայացվող պահանջները և այլն:

Ձեռնարկում կարևորվել է նաև գյուղական գրոսաշրջությունը որպես՝

- կայուն գրոսաշրջության բաղադրիչ,
- միջմշակութային համագործակցության միջոց,
- տարածաշրջանային տուրերի (շրջայցեր) մրցունակության բարձրացման գործոն:

Գրոսաշրջության ոլորտի ժամանակակից գարզացումների մեջ պետք է կարևորել «գյուղ»-ը, քանի որ այն եղակի արտադրանք առաջարկելու զգակի ներուժ ունի. շնորհիվ իր բնական միջավայրի, առանձնահատուկ խոհանոցի և տեղանքին բնորոշ տարատեսակ գրադմունքների:

ԲԱԺԻ 1

ԳՅՈՒՂԱԿԱՆ ԳՐՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԷԼԻՋՅՈՒԼԸ

1.1 ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՆՀԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Արդեն երկու հարյուրամյակ գրոսաշրջությունը համարվում է համաշխարհային տնտեսության արագներաց զարգացող ճյուղերից մեկը: Զբոսաշրջության շարունակական զարգացումն եականորեն խթանում է ոչ միայն ծառայությունների ոլորտի զարգացմանը, այև պայմաններ է ստեղծում նորանոր աշխատատեղերի առաջացման և բնակչության զբաղվածության առավել բարձր մակարդակ ապահովելու համար: Բազմաթիվ երկրների տնտեսության կառուցվածքում գրոսաշրջությունը համարվում է ամենաեկամտաբեր ճյուղը և նշանակալի տեղ է զբաղեցնում որոշ երկրների համախառն ներքին արդյունքի ծևավորման մեջ:

Հասարակության կողմից հանգստի հանդեպ ցուցաբերվող տարատեսակ հետաքրքրությունների հետևանքով առաջանում է զբոսաշրջության տեսակների բազմազանություն:

Յուրաքանչյուր մարդ յուրովի ընկալելով իր միջավայրը՝ տարբեր ակնկալիքներ է ունենում հանգստից: Սակայն զբոսաշրջության ոլորտը, բացի հանգստի կազմակերպումից, մի շարք առաքելություններ ել ունի: Ոլորտը մեծ ազդեցություն է ունենում ազգային ավանդույթների վերականգնման գործում, բազմաթիվ ասպեկտներով նպաստում է բնական ռեսուրսների պահպանման ու արդյունավետ օգտագործմանը:

Պետության սոցիալական համատեքստում գրոսաշրջությունը տարբեր միջոցներով նպաստում է գյուղական համայնքների և տնտեսապես անբարենպաստ տարածաշրջաններում սոցիալական աշխուժության ստեղծմանը, համայնքային ենթակառուցվածքների՝ նաև ապահովագույն համապատասխան համայնքների, հանգստի համար նախատեսված համալիրների, առողջապահության, տրանսպորտի զարգացմանը: Այս ամենի արդյունքում բաղաքամերձ շրջաններում բարձրանում է բնակչության կենսամակարդակը և բարելավվում է ապրելավերաբ:

Զբոսաշրջության ոլորտի սոցիալական նշանակությունը բավականին մեծ է, քանի որ ոլորտի անը գործորդվում է հասարակության բարեկեցությամբ. զբոսաշրջության զարգացման միտումների հետ անմիջականորեն կապվում են բնակչության եկամուտները և տնտեսական ընդհանուր զարգացումները: Բնակչության կենսամակարդակի և տեխնոլոգիաների զարգացման, հանապարհորդելու ցան-

կության անին գուգընթաց՝ ի հայտ են զայխ գրոսաշրջության նոր ուղղություններ՝ ակտիվացնելով մրցակցությունն այլ ուղղությունների միջև: Դրանցից է ներկայում մեծ հետաքրքրություն վայելող գյուղական գրոսաշրջությունը:

Դարկ է նշել, որ գրոսաշրջությունը նաև ազգային համապատասխան, հանգստի, առողջարարական, մարզական, կրոնական, ազգականներին այցելության, մասնագիտական, գործնական և այլ նպատակներով բնակության մշտական վայրից (երկրից) այլ վայր (երկիր) առավելագույնը մինչև մեկ տարի անընդմեջ ժամկետով նաև ապահովությունը հրականացնող բաղաքացների գործունեություն է:¹

Այլ կերպ՝ զբոսաշրջությունը գործունեության տեսակ է, որը կարևոր նշանակություն ունի ժողովուրդների կյանքում, հզոր տնտեսական միջոց է, արվեստ, գործարարություն մարդկանց զվարճացնելու և սպասարկելու համար,² որը միաժամանակ նպաստում է երկրի միջազգային նաև ազգային առաջարկությունների հիման վրա:

1.2 ԳՅՈՒՂԱԿԱՆ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՐԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Զբոսաշրջության հիմքում նաև ապահովությունն է, առաջարկի և պահանջարկի փոխազդեցությունից ծևավորված իրական գրոսաշրջային արդյունքը, որն իր վրա է կրում տնտեսական և սոցիալական մի շարք նախապայմանների ներգործությունը: Լավագույն հանգիստը միջավայրի փոփոխությունն է, որի միջոցով հնարավոր է կտրվել առօրյա հոգսերից ու խնդիրներից: Ուղևորության նպատակային զբաղմունքից կախված՝ տարանջատվում են հանգստի կազմակերպման ծները, ակնկալիքների, տպավորությունների և գրավչությունների բազմազանությունը:

Հանգստի տարբեր ծներն ընդլայնում են մարդու մտահորհզունքը, ապահովում են մասնակիցների հոգեկան և ֆիզիկական ուժերի

1 «Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» ՀՀ օրենք, ընդունված 2003թ. դեկտեմբերի 17-ին, ՀՀԴՏ 2004/6 (305) 29.01.04, Ռոդված 2. Օրենքի հիմնական հասկացությունները

2 Ուկանյան Ա.Զ., «Հայաստանի նախապետության զբոսաշրջության ոլորտում հնովացին գործունեության կառավարման հիմնախնդիրները, Առենախսություն, Երևան, 2014, էջ 32-48

Վերականգնումը, գեղագիտական բավականությունը: Քաղաքներում մարդիկ անխուսափելիորեն գտնվում են ակտիվ, անհանգիստ, աղմկոտ միջավայրում: Քաղաքային թոհուբորից հեռանալու ու բնության, գյուղական անդորրի մեջ հանգիստ կազմակերպելու այսօր բազմաթիվ երկրներում մեծ արդիականություն է վայելում: Գյուղական գրոսաշրջությունն էլ հանդիսանում է նմանատիպ հանգստի վար օրինակ:

Տարեկ տեսական մշակումներում, մեթոդաբանական աղբյուրներում գյուղական գրոսաշրջությանը տրվում են բազմաթիվ սահմանումներ, որոնք ընդհանրացնելով, ստորև ներկայացվում են գյուղական գրոսաշրջության հիմնական առանձնահատկությունները:

Գյուղական գրոսաշրջությունը գյուղական միջավայրում հանգստի կազմակերպման, գործարար և այլ նպատակներով (ճանապարհորդության հիմնական նպատակը ժամանման վայրում վեճարովի աշխատանքային գործունեությունը չե), առավելագույնը մինչև մեկ տարի անընդմեջ ժամկետով ճանապարհորդություն իրականացնող քաղաքացիների գործունեություն է:³

Համաձայն Ժ. Ռլուի գյուղական գրոսաշրջությունը հասկացություն է, որն իր մեջ ներառում է այն ողջ գրոսաշրջային գործունեությունը, որն իրականացվում է զարգացող գյուղական միջավայրում:⁴

Ավանդական գրոսաշրջության ձևերի կողքին դիտարկելով գյուղական գրոսաշրջությունը՝ կարելի է նկատել, որ այն նոր երևույթ է, և որպես գրոսաշրջության տարատեսակ՝ իր զարգացման պատմությունը սկսել է Արևմտյան Եվրոպայում նախորդ դարի 60-70-ական թվականներին:

Տարածաշրջանային առումով այդ երևույթը կենտրոնացած էր գերազանցական ֆրանսիայի, հոտալիայի, գերմանիայի գյուղատնտեսական տարածաշրջաններում:⁵ Այս տեսակի գրոսաշրջության հիմնական նպատակը համարվում էր գյուղական համայնքներում կազմակերպված գործունեության միջոցով պահպանել, վերակեն-

դանացնել տեղական սովորությունները, արհեստները և գարկ տալ ձեռնարկատիրական գործունեության զարգացմանը:⁶

Գյուղական գրոսաշրջությունը բաղկացած է հանգստի կազմակերպման մի շարք տեսակներից:

- ագրոգրոսաշրջություն,
- համայնքային էկոգրոսաշրջություն,
- էթնոգրոսաշրջություն,
- սպորտային գրոսաշրջություն,
- գաստրոնոմիկ գրոսաշրջություն
- և ուղղակի հյուրընկալության կազմակերպում գյուղական միջավայրում:⁷

Գյուղական գրոսաշրջություն ասելով հասկանում ենք մաքուր օդ, առողջ քուն, ֆիզիկական ակտիվություն, բազմաթիվ տպավորություններ, նոր ծանոթություններ, ինչպես նաև մի նոր աշխարհ բացահայտելու և բոլորվին այլ կյանքով ապրելու հնարավորություն: Գյուղացու սրտաբաց և քերմ ընդունելությունը, անհատական մոտեցումը, հոգատարությունը, էկոլոգիապես մաքուր սնունդն ու ապահովության գգացումն երաշխավորում են անվորով հանգիստ:

Գյուղական գրոսաշրջությունն ընտանեկան բիզնես է, որտեղ հաջողությունը կախված է ընտանիքում ապրող բոլոր անդամների համակարգված աշխատանքից:

Զբոսաշրջության այս տեսակի առաքելությունը կայանում է նրանում, որ գյուղական միջավայրում հյուրընկալության կազմակերպման համար անհրաժեշտ բոլոր ռեսուրսներն ուղղորդվում են դեպի այցելուների հանգիստ հոգեվիճակի ապահովմանն ու յուրովի ապրելակերպի հետ ծանոթանալու հետաքրքրությունների բավարարմանը:

Տարկ է նշել, որ Եվրոպական միության (ԵՄ) 27 անդամ երկրների բնակչության 56%-ն ապրում են գյուղական համայնքներում, դրանք գրանցնում են ամբողջ ԵՄ տարածաշրջանի 91%-ը:⁸ Սա հիմք է տա-

3 Eurostat. 1998. Community Methodology on Tourism Statistics. European Commission. Luxembourg.

4 Department for food and rural affairs. Tourism statistic. [Էլեկտրոնային աղյուր]

URL: <http://www.gov.uk/government/collections/rural-economy>

5 French agency for tourism development (AFIT), [Էլեկտրոնային աղյուր]

URL: <http://www.afit-tourisme.fr>

6 «Наше общее будущее»: Доклад Международной комиссии по окружающей среде и развитию (МКОСР)». Пер. с англ./Под ред. и с послесл. С. А. Евтеева и Р. А. Перелета/- М.: Прогресс, 1989 World Travel and Tourism Council. New Levels of Innovation in Sustainable Tourism, [Էլեկտրոնային աղյուր], URL: <http://www.wttc.org>

7 URL: http://en.wikipedia.org/wiki/Rural_tourism

8 URL: http://ec.europa.eu/agriculture/rurdev/index_en.htm

լիս ենթադրելու, որ գյուղական տարածաշրջանների զարգացման քաղաքականության մշակումներն առավել քան կարևոր են: Հատկապես անհրաժեշտություն է առաջանում ուշադրությունը սևեռև գյուղական և քաղաքային բնակավայրերի համաչափ զարգացմանը:⁹

Ներկայումս մեծ ուշադրության են արժանանում նաև բնական միջավայրի ճիշտ կառավարման և օգտագործման խնդիրները, որոնց լուծումները գյուղական համայնքներում առաջանում են ժամանակի հրամայական հանդիսացող տնտեսական դիմերսիֆիկացիաներ:

Նմանատիպ գործընթացների հիման վրա էլ գյուղական գրոսաշրջությունը տարբեր միջոցներով ազդեցություն է ունենում գյուղական միջավայրի զարգացման և բնակչության կենսամակարդակի բարձրացման վրա: Ոլորտում ստեղծված աշխատատեղերը և դրանց արդյունքում ծևավորված եկամուտները հանդիսանում են տեղի բնակչության կողմից գյուղական համայնքները չլրելու շարժարիթ:

Գյուղական համայնքներում գրոսաշրջության զարգացման բազմաթիվ նախադրյալներ կան, և դրանք իրենց առանձնահատկություններով կարող են օգտագործվել գրոսաշրջության ոլորտի զարգացման հեռանկարյաին նախագծերում: Դրանք նպաստում են գյուղական համայնքներում

- նոր աշխատատեղերի ստեղծմանը,
- գրոսաշրջության ոլորտում գործարար միջավայրի ակտիվացմանը,
- ներդրումային դաշտի ծևավորմանը,
- բնակչության կենսամակարդակի աճի ապահովմանը,
- մշակութային գործունեության ակտիվացմանը,
- տնտեսության այլ նյուղերի զարգացմանը՝ կապված գրոսաշրջային ծառայությունների ստեղծման և մատուցման հետ:

1.3 ԳՅՈՒՂԱԿԱՆ ԿԱՆԱԳ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԷՈՒԹՅՈՒՆԸ

Զբոսաշրջությունը տնտեսության այն ոլորտներից է, որում կանաչ միջավայրի պահպանման և օգտագործման հիմնահարցերը առավել քան արդիական են համարվում: Ըստ ՄԱԿ-ի «Կանաչ տնտեսություն»

9 Rural development policy 2007-2013, [էլեկտրոնային աղյուր], URL:http://ec.europa.eu/agriculture/mrdev/index_en.htm

գեկույցի՝ գրոսաշրջության ոլորտը կանաչ միջավայրի բարեկավման գործում զգալի ներդրումներ ունի: Դրանք կապված են եներգիայի արդյունավետ օգտագործման, ջրախնայողության, կոյուղիների կարգավորման և այլ կենցաղային-տնտեսական գործուների հետ, որոնք նպաստում են համեմատարար աղքատ համայնքային բնակչության կենսամակարդակի բարձրացման ու աշխատատեղերի ստեղծման գործընթացներին և դրական ազդեցություն են ունենում գրոսաշրջության հետ առնչվող տնտեսության հարակից նյուղերի վրա:¹⁰

Տարեցտարի գրոսաշրջային ժամանումներն ավելանում են, իսկ ոլորտն իր ազդեցությունն է ունենում երկիր մոլորակի վրա: Կիմայական փոփոխությունները, բնական միջավայրի և մթնոլորտի աղտոտվածությունը ավելացնում են դեպի կանաչ, մաքուր միջավայր նախընտրողների պահանջարկը: Դա նպաստում է շրջակա միջավայրի կայունության, կենսաբազմազանության պահպանության, ջրամատակարարման և թափինների կառավարման գործընթացների բարեկավման հանդեպ ուշադրության մեծացմանը: Զբոսաշրջությունը և էկոլոգիական կայունությունն արագործեն դառնում են համագործակիցներ: ¹¹

Կանաչ գրոսաշրջությունը, որը սահմանվում է նաև որպես էկո-զբոսաշրջության բաղադրիչ, գրոսաշրջության ամենաարագ զարգացող ուղղություններից է: Կանաչ գրոսաշրջության համար որպես գրավչության օբյեկտ՝ հանդիսանում է երկրի լանդշաֆտը, մաքուր միջավայրը, կենդանական ու բուսական աշխարհի բազմազանությունը և այլն:

«Կանաչ գրոսաշրջությունը» ենթադրում է գրոսաշրջային արդյունաբերության մեջ էկոլոգիական մեթոդների և տեխնոլոգիաների կիրառում՝ չնայած որ գրոսաշրջության բնագավառում «կանաչ» ծևակերպումը սակավ է օգտագործվում: Գյուղական կանաչ գրոսաշրջությունն առավել տարածված է ԱՄՆ-ում և Արևմտյան Եվրոպայի երկրներում: Եվրոպացինների համար վաղուց հայտնի է, որոր գյուղում հանգստի կազմակերպումը, եթե նույնիսկ այդքան շահու-

10 World Tourism Organization – UNWTO, «Tourism in the Green Economy», UNWTO Sustainable Development of Tourism Programme, [էլեկտրոնային աղյուր], December 2011, URL: <http://www.sdt.unwto.org>

11 Jürgen Ringbeck, Amira El-Adawi, Amit Gautam, «Green Tourism. A Road Map for Transformation», 2010 Booz & Company Inc. [էլեկտրոնային աղյուր], URL: http://www.strategyand.pwc.com/media/file/Green_Tourism.pdf

թաքեր չե, որքան հայտնի ծովային և լեռնադահուկային բուժավայրերում (կուրորտներում), ապա, ամեն դեպքում կայուն եկամուտ կարող է ապահովել:

Գյուղական կանաչ գրոսաշրջությունը բազմակողմանի երևույթ է: Այն պետք է դիտարկել որպես գյուղական բնակչության եկամուտների աղբյուրների դիվերսիֆիկացիայի միջոց և որպես գյուղական տարածքների ու գյուղական ենթակառուցվածքի համալիր զարգացման բաղադրամաս, ինչպես նաև՝ գյուղական համայնքներում աղքատության վերացման ռազմավարության գործոն: Այդ պատճառով զարգացող երկրներում գյուղական կանաչ գրոսաշրջությունը պետության կողմից ամեն կերպ աջակցվում և խրախուսվում է: Այս բնագավառում պարզեցված են սուրբեկուների հնարավոր բոլոր առավելությունները, կիրառվում են նաև հարկային արտոնություններ:

Կանաչ գրոսաշրջությունն առաջարկում է վստահելի, անկախ ձեռներեցություն՝ առաջնորդվելով կայունության պահպանման սկզբունքներով:¹² Ապրուստի միջոցների հայթիայթման հնարավորությունները գյուղական միջավայրում սահմանափակ են, և գրոսաշրջության այս տեսակի զարգացումը դառնում է տնտեսական և սոցիալական խնդիրների թեթևացման միջոցներից մեկը: Այս ձեռներեցությամբ զբաղվողներին ավելի քիչ ներդրումներ են հարկավոր:

Ներկայի պայմաններում, երբ ամբողջ աշխարհը սկսել է պայքարել գենետիկորեն աճեցված, ոչ մաքուր, այսպես կոչված՝ «քնությունից կտրված» սննդի դեմ, գյուղական գրոսաշրջությունը հնարավորություն է տակի որոշ ժամանակ գերծ մնալ այդպիսի վնասակար ազդեցություններից:¹³

Զրոսաշրջության մի քանի ուղղություններ գրեթե նույն նպատակն են հետապնդում, միևնույն առաքելությանը միտված ծրագրեր են իրականացնում: Այդպիսի համանման ուղղություններ են կանաչ գրոսաշրջությունը, էկոտուրիզմը, կայուն գրոսաշրջությունը և էլի միշարք տեսակներ (վայրի բնության գրոսաշրջություն և այլն): Այս ուղղություններն որոշ տարբերակիչներով կիրառվում են մասնագիտա-

կան ասպարեզում: Հարկ է նշել, որ պատմականորեն դրանց սկզբանաբարությունը համարվում է կանաչ գրոսաշրջությունը:¹⁴

Գյուղական զարգացող կանաչ գրոսաշրջությունը տարածում է իր ազդեցությունը ամբողջ աշխարհում պահպանելով շրջակա միջավայրը գալիք սերունդների ժառանգման համար:

1.4 ԳՅՈՒՂԱԿԱՆ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԿԱՊՆ ԱԳՐՈՏՈՒՐԻՉԱՑՄԻ ԵՎ ԷԿՈՏՈՒՐԻՉԱՑՄԻ ՀԵՏ

Գյուղական գրոսաշրջության կապն ագրոտուրիզմի և էկոտուրիզմի հետ ներկայացնելու համար անհրաժեշտ է պարզաբանել, թե ինչ են իրենցից ներկայացնում ագրոտուրիզմը և էկոտուրիզմը:

Եվրոպական հանձնաժողովը գյուղական գրոսաշրջության սահմանումը տալիս է ըստ ներքոնշյալ երկու կարևոր հատկանիշների՝

- եկամուտների հոսք, որը վաստակում է տեղի բնակչությունը գրոսաշրջիկների այցերի ժամանակ,
- գյուղական մշակույթ, որը կազմում է գրոսաշրջային արդյունքի հիմնական բաղադրիչը:¹⁵

Երկրորդ հատկանիշն առավել կարևորելով՝ կարող ենք համարել, որ գրոսաշրջային արդյունքի բաղադրիչների առանձնահատկություններից կախված՝ գրոսաշրջության տվյալ տեսակը կարող է տրոհվել ագրո-, էկո-, ֆերմերային գրոսաշրջության:

Ագրոտուրիզմը գործունեության տեսակ է, որը կազմակերպվում է գյուղական միջավայրում: Այն նախատեսվում է համալիր ծառայությունների կազմակերպում և մատուցում ներառելով կացության, հանգստի, սննդով ապահովման, էքսկուրսիաների կազմակերպման, ծկնորսության և որսորդության հարցեր, որոնց ընթացքում ծեռք են բերվում որոշակի գիտելիքներ ու միաժամանակ հնարավորություններ են ընձեռվում գրոսաշրջության ակտիվ ծներով զբաղվելու համար:¹⁶

14 «Natural Capital Limited», The Green Tourism Agenda, Edinburgh, EH3 8JB, September 2002, [Էլեկտրոնային աղյուր], URL: http://fama2.us.es:8080/turismo/turismonet1/economia%20del%20turismo/turismo%20y%20medio%20ambiente/green_tourism_agenda.pdf

15 Baltic County Holidays. Professional information [Էլեկտրոնային աղյուր] URL: <http://www.celotajs.lv/en/news/list/p?3&lang=en>

16 Определение агротуризма. Ассоциация развития агротуризма [Էլեկտրոնա-

12 URL: <http://www.green-tourism.com/>

13 Աղաջանյան Ա.Ա., Զրոսաշրջության ռազմավարական կառավարման արդյունաբերության բարձրացման հիմնախնդիրները (ՀՀ նյութերով), Տնտես. գիտ. ատենախոսություն (08.00.02), Երևան, 2013, էջ 97-105

Զբոսաշրջության այս ծեզ հիանալի հանգստի միջոց է այն մարդկանց համար, ովքեր մշտապես բնակվում են մեծ քաղաքներում: Այցելուները նման հանգստի պայմաններում ակնկալում են վայելել բնությունը և ծանոթանալ գյուղական տարածքներին, ապրելակերպին, ավանդույթներին ու ծեսերին:

Ագրոտուրիզմը հիմնականում հնարավորություններ է ստեղծում շեշտադրելու գյուղատնտեսական բիզնեսի առանձնահատուկ նյութեր՝ գինեգործություն, կաթի վերամշակում, պանրի արտադրություն, այգեգործություն, բնական միջավայրում այլ գործունեություններ:

Գյուղական գրոսաշրջությունն անխուսափելիորեն կապված է ագրոտուրիզմի հետ: Զբոսաշրջիկների ակնկալիքները հանգստի այս տեսակներից շատ բազմազան են: Նրանց սպասելիքների պատշաճ ձևով բավարարումը շարժադիրներ է ստեղծում տվյալ տարածաշրջանի գրոսաշրջային գրավչության բարձրացման ուղղությամբ:

Ագրոտուրիզմի և գյուղական գրոսաշրջության միջոցով այցելունը գացմունքային պատկերացումների հենքի վրա հիմնավորում են իրենց իմացական դաշտը տվյալ սոցիալական խմբի ապրելակերպի մասին, որոնց արդյունքում ծևավորվում է այդ պետության հավաքական կերպարը:

Տարբեր երկրներում ագրոտուրիզմի զարգացման հիմնական խնդիրներն ուսումնասիրելով՝ կարելի է առանձնացնել առավել ընդհանուրները: Դրանք են՝

- իրավական բազայի թույլ զարգացվածություն,
- սեփական բիզնես սկսելու նկատմամբ ցածր պատասխանատվություն,
- այդպիսի գործունեությամբ զբաղվելու համար գիտելիքների բացակայություն,
- ապրուստի պայմանների, տրանսպորտային և այլ ենթակառուց վածքների ցածր մակարդակ:¹⁷

յին աղբյուր], URL: <http://www.agritourism.ru>, <http://5p.ru/?p=308>

17 Барановский Н.А., Агротуризм как форма стимулирования развития сельских территорий Украинского полесья, Это-и агротуризм: перспективы развития на локальных территориях: тезисы докл. II междунар.науч.-практ. конф., Баранович 2010, стр.13

Բազմաթիվ խնդիրներ առկա են նաև էկոտուրիզմի դաշտում: Եվ այդ ամենն իր նշանակալի ազդեցությունն է ունենում գյուղական գրոսաշրջության զարգացման վրա: Հարկ է նշել, որ գյուղական գրոսաշրջությունը երբեմն համարում են նաև էկոգրոսաշրջության բաղկացուցիչ մաս:

Էկոտուրիզմը գրոսաշրջության տեսակ է, որը նպաստում է բնական և մշակութային ժառանգության ճանաչման ու հասկանալուն, և բերում է տեղի բնակչության անհրաժեշտ չափով շահույթ, որպեսզի մարդիկ որպես եկամտի աղբյուր գնահատեն և պահպանեն շրջակա միջավայրը:¹⁸ Էկոտուրիզմի հիմնական նպատակներն են բնական և մշակութային ժառանգության պահպանությունը, բնապահպանական իրազեկությունը և կրթությունը, տեղի բնաչության բարեկեցության բարձրացումը:

Էկոգրոսաշրջությունը ճանապարհորդություն է դեպի այն վայրեր, որտեղ թիզ թե շատ պահպանված են կուսական բնությունը: Այս հանգստի տեսակը չի խախտում էկոհամակարգերի ամբողջականությունը և նպատակ է հետապնդում երևան հանել տվյալ վայրի բնական և եթու-մշակութային առանձնահատկությունները: Միաժամանակ՝ էկոգրոսաշրջությունը տվյալ վայրի բնակիչների համար բնության պահպանության ուղղված միջոցները հավելելու ձև է: Այլ կերպ՝ էկոգրոսաշրջությունը գրոսաշրջության մի տեսակ է՝ ուղղված դեպի բնությանն ու դրա վերականգնմանը: Չատ հաճախ էկոգրոսաշրջությունը գործորդվում է ակտիվ հանգստի կազմակերպմամբ, հատկապես կարող է ընդգրկել մշակութային, ինչպես նաև արկածային գրոսաշրջության բաղադրիչներ, որոնք ել ավելի գրավիչ են դարձնում այս ուղղությունը:

Ագրոտուրիզմի և էկոտուրիզմի զարգացումն ուղղակիորեն կապված է ուրբանիզացման գործընթացների հետ: Այսինքն՝ քաղաքային բնակավայրերի և բնակչության ավելացումը, որպես կանոն, ուղեկցվում է էկոհամակարգի, գյուղական բնակավայրերի կրճատումով: Այս ամենը քաղաքային բնակչության համար առաջացնում է բնության և գյուղական կենցաղի հետ հաղորդակցվելու սահմանափակումներ: Հետևաբար՝ առողջ ապրելակերպի համար բնական միջավայրից և օրգանական սննդամթերքից օգտվելու կարիքն էկո-

18 Գալյան Ժաննա, Էկոտուրիզմը բնության հատուկ պահպանվող տարածում, երևան, «Լուսակն» հրատ., 2007թ., էջեր 8-12

տուրիզմի և ագրոտուրիզմի նկատմամբ հարաճուն պահանջարկ է առաջացնում:

Սակայն եկոգրոսաշրջությունը, գյուղական գրոսաշրջությունը և ագրոտուրիզմը ավելին են, քան նաև պարհորդությունը, հանգիստը: Այս տեսակների միաժամանակյա գործունեությունը նպաստում է գյուղական համայնքների համաշափ զարգացմանը: Մրանք յուրաքանչյուր գյուղաբնակին հնարավորություն են ընծեռում իրենց գործարարությունը դարձնելու առավել պահանջված և բազմազան:

1.5 ԳՅՈՒՂԱԿԱՆ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆԸ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՁԵՎԵՐԻ ԴԱՍԱԿՐՎԱՆ ՄԵԶ

Գյուղական գրոսաշրջության կազմակերպման ժամանակ հաճախ հարկ է լինում այն գուգորդել գրոսաշրջության այլ ձևերի հետ:

Գյուղական գրոսաշրջային փաթեթ նախագծելիս կազմակերպիչները գերադասում են համադրել գրոսաշրջության մի քանի ձևեր, օրինակ՝ գաստրոնոմիկ, պատմամշակութային, նաև զողական, արկածային, սպորտային, իրադարձային գրոսաշրջություն և այլն:

Զբոսաշրջության տեսակների բազմազանությունը պայմանավորված է մարդուն ճամփորդության միջող շահադրդման ներքին որոշ գործուներով: Հարկ է նշել, որ գրոսաշրջության ձևերը տարանցատվում են ըստ արտաքին պատճառների կամ ազդեցությունների: Ըստ արտաքին չափորոշիչների՝ գյուղուն ունեն գրոսաշրջության ձևերը դասակարգելու բազմաթիվ տարբերակներ, մասնավորապես՝

- ըստ սեզոնայնության,
- ըստ կազմակերպման ձևի,
- ըստ գրոսաշրջիկի տարիքի,
- ըստ տրանսպորտային միջոցի,
- ըստ գրոսաշրջիկի ծագման,
- և այլն:

Գյուղական գրոսաշրջության հիմնական նպատակներից է համարվում տվյալ տարածաշրջանում կազմակերպվող գրոսաշրջային գործունեության խսիր սեզոնայնության սահմանների ընդարձակումը: Կախված սեզոնայնությունից՝ ընդգծված տարանջատվում են ձմեռային և ամառային գրոսաշրջային գործունեությունները: Այսպիսի

տարանջատումը հնարավորություն է տալիս ուսումնասիրել զբոսաշրջության պահանջարկի դիմավորման ըստ եղանակների: Տարվա այն եղանակը, որին բաժին է ընկնում իրականացված նանապարհորդությունների գերակշիռ մասը, անվանում են գրոսաշրջային սեզոն:

Կախված գրոսաշրջության կազմակերպման ձևի չափորոշիչից՝ տարբերակում են խմբային և անհատական գրոսաշրջության ձևերը: Խմբային գրոսաշրջությունը ենթադրում է, որ այն ստանդարտացված է. ձևավորված են գրոսաշրջային ծառայությունների ժամկետները, համակիրը, երթուղին, գրոսաշրջային կենտրոնները և այլն: Անհատական գրոսաշրջության դեպքում գրոսաշրջիկն այն կազմակերպում և իրականացնում է ինքնուրույն: Գյուղական գրոսաշրջության կազմակերպման ժամանակ մեծ խմբային այցելությունները մասսայականություն չեն վայելում: Այն հիմնականում ընտանեկան հանգստի համար է և կազմակերպվում է հնարավորինս ինքնուրույն առանց միջնորդ օղակների:

Զբոսաշրջային շուկայում ըստ ճանապարհորդողների տարիքային սանդղակի, տարանջատում են գրոսաշրջիկների հետևյալ խմբերը՝

- ծնողների հետ ճանապարհորդող երեխաներ,
- երիտասարդներ (15-24 տարեկան),
- տնտեսապես ակտիվ և երիտասարդ մարդիկ (25-44 տարեկան),
- միջին տարիքի տնտեսապես ակտիվ մարդիկ (45-64 տարեկան),
- թոշակառուներ (65 տարեկան և բարձր):

Գյուղական գրոսաշրջության կազմակերպման մեջ հարկավոր է կարևորել այս չափորոշիչը, քանի որ գյուղական հանգստի փաթեթ ձևավորելիս դրանով է պայմանավորում գրոսաշրջության այլ տեսակների հետ համատեղելիությունը:

Ըստ տրանսպորտային միջոցի՝ գյուղական գրոսաշրջության մեջ առավել տարբերակվում են իրենց կամ վարձակալված մեքենայով և հանրային տրանսպորտով ճանապարհորդող գրոսաշրջիկներ:

Ըստ գրոսաշրջիկների ծագման չափորոշիչ՝ տարբերակում են, ներքին, արտագնա և ներգնա գրոսաշրջություն:¹⁹ Այս դեպքում «ծագում» բառը նշանակում է ոչ թե անձի բնօրրան, այլև ճանապարհորդի մշտական բնակության վայր: Ըստ այդմ՝ որոշակի տարածա-

¹⁹ Дурович А.П., Организация туризма. Издание третье, стереотипное. Минск, ООО «Новое знание», 2006, стр. 30

շրջանի առանձնահատկությունները հաշվի առնելով՝ տարբերակում են գրոսաշրջության հետևյալ տեսակները²⁰

- Ներքին գրոսաշրջություն (որևէ երկրում բնակվող քաղաքացիների իրականացրած ճանապարհորդությունն է, իրենց երկրի սահմաններում (քազմաթիվ երկրներում գյուղական գրոսաշրջությունը զարգանում է ներքին գրոսաշրջության հաշվին),
- արտագնա գրոսաշրջություն (որևէ երկրում բնակվող քաղաքացիների ճանապարհորդությունն է դեպի մեկ այլ երկր (գյուղական գրոսաշրջության կազմակերպման ժամանակ որպես արտագնա ուղղություն նախընտրելի են հարևան երկրները, որով էլ զարկ են տրվում տարածաշրջանային այցելությունների զարգացմանը),
- Ներգնա գրոսաշրջություն (այլ երկրի քաղաքացիների համար ընդունող երկրում հանգիստ կազմակերպելու տեսակն է (անկախ գրոսաշրջության կազմակերպման ծնից՝ սա համարվում է ամենաեկամտաբեր տեսակը գրոսաշրջիկ ընդունող երկրի համար):

Պարզորշ տեսանելի է, որ գյուղական գրոսաշրջության կազմակերպումը գրոսաշրջության ծների դասակարգման մեջ ունի իրեն բնորշ առանձնահատկություններ:

Գյուղական գրոսաշրջության պահանջարկն արտահայտվում է քաղաքամերձ շրջաններում գրոսաշրջային ծառայությունների քանակության տեսքով: Իսկ գյուղական գրոսաշրջության արտադրանքը տեղանքին բնորշ այն գրոսաշրջային ծառայությունների ամբողջությունն է, որը տվյալ գնի դեպքում պատրաստ են վաճառել գրոսաշրջային արտադրանքը թողարկողները:

Գյուղական գրոսաշրջության շուկայում գործող առաջարկի և պահանջարկի դրսևորմամբ է պայմանավորված այս դասակարգիչների առկայությունը, քանի որ յուրաքանչյուր խումբ իր պահանջմունքները բավարարելու հատուկ վերաբերմունք է ակնկալում, որոնց դիմաց նրանք ունակ են և պատրաստ են վճարել:

1.5.1 ՊԱՏՄԱՄԺԱԿՈՒԹՅԱՅԻՆ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ

Պատմամշակությաին գրոսաշրջությունը, առհասարակ, գրոսաշրջության ամենագրավիչ տեսակն է: Այս ուղղության կազմակերպման հիմքը կազմում է երկրի պատմամշակութային ներուժը, որը ներառում է սոցիալ-մշակութային միջավայրը՝ նյութական և ոչ նյութական արժեքների հետ համատեղ:

Պատմամշակութային գրոսաշրջության համար ռեսուրսներ են համարվում պատմաճարտարապետական կառույցները, կրոնական, պաշտանմունքային կոթողները, հնագիտական այլ հուշարձանները, գյուղական բնակավայրերը, պատմական բնակատեղիները, կամուրջները, աղբյուրները, մահարձան-կոթողները, խաչքարները ու աշխարհիկ կամ կենցաղային այլ շինությունները, թանգարանները, տարաբնույթ ցուցասրահները, թատրոնները և այլ սոցիալական, տնտեսական ու մշակութային կարևորություն ներկայացնող պատկամշակութային ռեսուրսները:

Երկրի պատմության ընթացքում պահպանված պատմական, մշակութային հիշարժան կոթողները և եթևոմշակութային եզակիություն ներկայացնող ռեսուրսները միայն բավարար չեն պատմամշակութային գրոսաշրջություն իրականացնելու համար: Նարկավոր է ներգրավել նաև գրոսաշրջության արդյունաբերության մեջ մեծ կարևորություն ներկայացնող հարակից այլ ռեսուրսներ, որի պարագայում էլ հնարավոր կլինի իրականացնել պատմամշակութային գրոսաշրջությունը:

Պատմաճարտարապետական հուշարձանները ներկայացնում են երկրի մշակութային գործունեության հիմքեր հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը: Գալով դարերի խորքից՝ դրանք սեղունդներին են ներկայացնում ժողովրդի քազմադարյան նյութական մշակույթի ակնառու նվաճումները: Այդ հուշարձանները տվյալ երկում իրենց ունեցած դերով, քանակով, քազմազանությամբ ու արժեքայնությամբ առանձնահատուկ տեղ են գրավում գրոսաշրջային արդյունաբերության մեջ և անընդհատ օգտագործվում են տարբեր տեսակի տուրիզմային ներուժություններում, այդ թվում նաև՝ գրագորդվում են գյուղական գրոսաշրջության հետ:

Զբոսաշրջության ոլորտը նպաստում է հասարակության կողմից պատմամշակութային արժեքների պահպանման և նանաչման ծրագրումներին:

20 Զբոսաշրջության և գրոսաշրջային գործունեության մասին ՀՀ օրենքը, ընդունված 2003թ. դեկտեմբերի 17-ին, ՀՀԴՏ 2004/6 (305) 29.01.04, Գլուխ 1, Ընդհանուր դրույթներ, Նոդված 2. Օրենքի հիմնական հասկացությունները

1.5.2 ՆԱՆԱՀՈՂԱԿԱՆ ԶԲՈՍԱՀՐՁՈՒԹՅՈՒՆ

Նանաչողական գրոսաշրջությունը միտված է ժողովրդի մշակույթի, ապրելակերպի և սովորությունների ներկայացնելուն: Նանաչողական գրոսաշրջությունը բավականին ընդգրկուն է, և գրոսաշրջիկների սեգմենտավորումը այդքան էլ խիստ չի դիտարկվում:

Նանաչողական տուրերի (շոջայցերի) առավել տարածված ուղղություն է այցելությունները տեսարժան վայրեր՝ քաղաքներ, գրոսաշրջային կենտրոններ և այլն, որոնք իրենց մեջ կարող են ընդգրկել թանգարանների, թատրոնների, այցելած երկրի ավանդույթների հետ ծանոթացման նպատակով ճամփորդություններ:

Զբոսաշրջության այս ուղղությունն իր մեջ ներառում է նաև նանաչողական և ոեկրեացիոն (վերականգնողական) նպատակներ: Այս ուղղության համար օգտագործվող տարածքները պետք է լինեն քարեկարգ, ունենան տեղանքին համահունչ հանգստի տաղավարներ, համապատասխան դիտակետեր և այլ անհրաժեշտ ռեսուրսներ, նաև պետք է պարբերաբար **իրականացնել** աղբահանումներ:

Նանաչողական տուրերն ունեն թեմատիկ ուղղվածություն՝ պատմական, մշակութային, էկոլոգիական, ազգագրական, թատերական և այլն: Այս ձևերի կազմակերպման ժամանակ երեսմն ներկայացվում են տվյալ ուղղության թեմատիկայով միջոցառումներ: Նման էքսկուրսիաները ուղեկցվում են փորձառու գիդ-ուղեկցողների կողմից, որոնք ցանկալի են, որ խոսեն գրոսաշրջիկների համար հասկանալի լեզվով առանց թարգմանիչի:

Բնության հատուկ պահպանվող տարածքներում էլ են կազմակերպվում նանաչողական ուղևորություններ:

Դարձ է ուշադրություն դարձնել այն հանգամանքին, որ նանաչողական ճամփորդությունների ծրագրման մեջ պետք է ժամանակ տրամադրել քաղաքում շրջելու և գնումներ կատարելու համար:

Գյուղական գրոսաշրջության կազմակերպման մեջ ներգրավվելով նանաչողաման բնույթի ռեսուրսներ՝ նպաստում են գրոսաշրջիկների համար օտար երկրի նանաչողական գրոսաշրջիկների համար:

1.5.3 ԳԱՍՏՐՈՆՈՄԻԿ ԶԲՈՍԱՀՐՁՈՒԹՅՈՒՆ

Գաստրոնոմիկ գրոսաշրջությունը հիմնված է որևէ տեղանքին բնորոշ ուտեստների և ըմպելիքների ցուցադրման, վաճառքի և վաճառքի վայրում նրանց պատրաստման ու օգտագործմանը միտված գործնթացների կազմակերպման վրա: Ընդ որում՝ այդ ամենն ուղեկցվում է հյուրընկալման ոլորտում իրականացվող տարրեր ծառայություններով՝ ապահովելով հանգստի և ժամանցի հետաքրքիր ընթացքը: Զբոսաշրջության այս տեսակն իր մեջ ներառում է նաև այն փառատոններ և իրադարձություններ, որոնք նվիրված են խմիչքներին կամ ուտեստներին (օրինակ՝ Մյունիենի «Օկտոբերֆեստը», Արենիի «Գինու» փառատոնը և այլն): Տոնի վերածված նման իրադարձությունները բազմանույթ են դարձնում տուրերը և հանգեցնում են տվյալ ուղղության մրցակցային առավելությունների մեծացմանը:

Գյուղական գրոսաշրջության կազմակերպման մեջ ավելի քան կիրառվում են գաստրոնոմիկ գրոսաշրջությանը բնորոշ տարրեր: Գաստրոնոմիկ գրոսաշրջությունը բացահայտում և տարածում է տվյալ երկրի, ժողովրդի խոհանոցային արվեստը, ավանդական ուտեստների և խմիչքների պատրաստման գործնթացները:

Ազգային խոհանոցը ծևավորվում է դարերի ընթացքում և համարվում է ազգային նկարագրի վառ օրինակ: Բազմաթիվ գրոսաշրջիկներ ճանապարհորդության ընթացքում կարևորում են համեղ սնվելը, և, իհարկե, ազգային խոհանոցի առանձնահատկություններով համեմում են իրենց հիշողությունները: Բազմաթիվ երկրներում ազգային խոհանոցը գյուղական համայնքներում տարրեր դրսևորում են ունի, որոնք ել գաստրոնոմիկ գրոսաշրջության կազմակերպման մեջ մեծ հետաքրքրություն են առաջացնում:

Դատկանշական է, որ գյուղական գրոսաշրջության գարգացման հետ մեկտեղ գյուղատնտեսների տներում ստեղծվում են համապատասխան պայմաններ՝ ուտեստների պատրաստման գործնթացը պատշաճ ծնով ցուցադրելու և ցանկության դեպքում գրոսաշրջիկներին այդ ամենի մասնակիցը դարձնելու համար:

1.5.4 ԱՐԿԱԾԱՅԻՆ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ

Արկածային գրոսաշրջությունը ակտիվ հանգստի կազմակերպման տեսակ է, որն իրականացնելու համար անհրաժեշտ է ֆիզիկական պատրաստվածության որոշակի մակարդակ, մշակութային փոխներգործություն և բնական միջավայր՝ արդյունքում ակնկալելով անկրկնելի, սուր և անկանխատեսելի տպավորություններ:

Սա կենսածն է, մտածելակերպ, հոգու անըմբռնելի ազատության բացահայտման և ադրենալինի ձեռքբերման հնարավորություն: Հոգեբանական պատրաստվածությունն անչափ կարևոր է գրոսաշրջության այս տեսակով գրաղության անձի համար: Հակառակ դեպքում հետևանքները կարող են անդառնալի լինել: Այդ պատճառով էլ առավելագույնս կարևորվում է անվտանգության նորմերի պահպանում՝ հատուկ հանդերձանքի և այլ պարագաների օգտագործմամբ: Արկածային գրոսաշրջության մեջ առավելապես կիրառվում են գլոբալ տեղայնացման համակարգեր (GPS), էլեկտրոնային քարտեզներ:

Արկածային գրոսաշրջությունը բաժանվում է երկու տեսակի՝ թերևն և դժվարին արկածային ճամփորդությունների:

- Թերևն ծները հատուկ վիրճառություն չեն պահանջում, շատ ոխկային չեն և գրեթե առանց դժվարությունների կարող են իրականացվել ֆիզիկական որևէ պատրաստվածություն չունեցող ճանապարհորդի կողմից: Դրանց շարքին են դասվում հետևյալ տեսակներ՝ թեմփինգ, հեծանվաարշավ, սաֆարի, քայլարշավ, ծիավարություն, թռչնադիտում և այլն: Որոշ շրջաններում ճանապարհորդությունների ժամանակ գրոսաշրջիկները կարող են ծանոթանալ տարբեր ազգերի մշակույթների հետ և հաճելի ժամանակ անցկացնել շրջակա միջավայրում:
- Դժվարին ծները իրականացներու համար հարկավոր է ունենալ փորձ, քանի որ դրանք ոխկայնության բարձր մակարդակ են պարունակում, օրինակ՝ լեռնագնացություն, ռաֆթինգ, լեռնային հեծանվաարշավ, ջրասուզում և այլն: Դժվարին ծների մեջ են դասակարգվում եքստրեմալ գրոսաշրջության տարատեսակները: Մրանց սիրահարները նախընտրում են խելահեղ պահեր ապրել չքացահայտված քարանձավներում, վլունագավոր քարձորություններում և հետաքրքիր այլ վայրերում: Նմանատիպ տուրերի երթուղիներում հաղթահարվում են բազմաթիվ խոչնորուներ:

Գյուղական գրոսաշրջության կազմակերպման ժամանակ ավելի կիրառելի են արկածային գրոսաշրջության թերևն տեսակները, քանի որ դրանց մեջ գրեթե առանց դժվարության կարողանում են ներգրավվել տարբեր սեգմենտի գրոսաշրջիկների և որոնք ֆիզիկական մեծ ծանրաբեռնվածություն չեն պահանջում, նվազեցված է ճամփորդության ոխկայնության մակարդակը, կարճաժամկետ և ցածրարժեք են: Այս տուրերը հաճախ են լրացվում եթևորոսաշրջությամբ (մշակութային առանձնահատուկ տարրերով):

Արկածային գրոսաշրջությունն արագ զարգացող տեսակ է, որը հիմնականում պահանջում է փորձառություն և հնարավոր է համադրել բազմաթիվ նպատակներով իրականացվող ճանապարհորդությունների հետ: Զբոսաշրջության այս տեսակը, իհարկե, հնարավորություն է տալս մարդուն հասկանալ, իմաստավորել իր անձը և փորձել սեփական ուժերը:

1.5.5 ԻՐԱԴԱՐՁԱՅԻՆ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ

Իրադարձային գրոսաշրջությունը համեմատաբար երիտասարդ, տպավորիչ և հետաքրքիր ուղղվածություն է: Այն տուրերը, որոնք իրենց մեջ համակցում են ավանդական հանգիստը և երկրագնդի ամենաառանձնահատուկ միջոցառումներին մասնակցությունը, աստիճանաբար մեջ ճանաչում են ծնոք թերություն: Իրադարձային գրոսաշրջությունն անսպառ բովանդակություն ունի և հիմնականում ենթադրում է տոնի միջավայր: Այն դասակարգվում է ըստ ազգային կամ միջազգային մակարդակների: Նման իրադարձությունները հիմնականում գրավում են մասնագետների և պարզապես հետաքրքրացներ գրոսաշրջիկների:

«Իրադարձային գրոսաշրջություն» ասելով նկատի ունենք գրոսաշրջային գործունեություն՝ կապված կարևոր նշանակալի հանրային իրադարձությունների, հազվադեպ, յուրահատուկ և եկզոտիկ բնական երևույթների հետ, որոնք իրենց անկրկնելիությամբ գրավում են ոչ միայն տեղացիներին, այլև օտարերկրացիներին:

Իրադարձային գրոսաշրջության մաս են կազմում մշակութային, ազգագրական, գաստրոնոմիկ փառատոնները, ցուցահանդեսները, կինոփառատոնները, կառնավալներն ու ժողովրդական տոնները, մի-

շազգային սպորտային մրցակցությունները (օրինակ՝ Օլիմպիական խաղեր, ֆորմուլա 1-ի ավտոմրցարշավեր) և այլն:

Իրադարձային գրոսաշրջության առանձնահատկությունն այն է, որ ամեն տարի այն համարվում է իրադարձային նոր տուրերով՝ որոնք աստիճանաբար դառնում են կանոնավոր: Իրադարձային տուրերի անցկացման ընթացքում տվյալ տարածաշրջանում ակտիվանում է գրոսաշրջության ենթահամակարգերի բոլոր օղակների գործունեությունը: Նկատվում է տեղի մշակութային ավանդույթների, սովորույթների, ժողովրդական արվեստի վերածնունդ:

Գյուղական համայնքներում կազմակերպվող իրադարձությունները, փառատոններն ու տոնակատարությունները տնտեսական մեծ նշանակություն ունեն: Դրանք գրավում են տարբեր նախասիրություններ ունեցող գրոսաշրջիկներին և նպաստում են միջազգային շուկայում տվյալ երկրի գրավիչ նկարագրի ծնավորմանը: Իսկ ամենահատկանշականն այն է, որ դրանք նպաստում են գրոսաշրջային սեղոնի երկարածմանը, համայնքներում գրոսաշրջության զարգացմանը:



Բազմաթիվ երկրներում պետականորեն ուշադրության է արժանանում իրադարձային գրոսաշրջությունը, որի գարգացումը մեծ խթան է հյուրընկալման ոլորտում ապակենտրոնացման, այդ թվում՝ տարածքային, սոցիալ-տնտեսական խնդիրների լուծման ու զարգացման համար (մասնավորապես, Շայաստանում կարելի է առանձնացնել գաստրոնոմիական իրադարձությունները՝ խորովածի փառատոն Ախթալայում, դոլմայի փառատոն Սարդարապատում, հարիսայի օր Մուսա Լեռում, գինու փառատոն Արենիում, մեղրի փառատոն Բերդ քաղաքում, բերքի փառատոններ տարբեր մարզերում և այլն):

1.5.6 ԶՐՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԱՅԼ ՏԵՍԱԿՆԵՐ

Զրոսաշրջության գրեթե բոլոր տեսակները համադրելի են որևէ տեսակի, այդ թվում՝ գյուղական գրոսաշրջության հետ՝ կախված տարածաշրջանից, ռելիեֆից, շրջապատող բուսական և կենդանական աշխարհից, ազգային առանձնահատկություններից: Վերը նկարագրված զրոսաշրջության տեսակները բազմից օգտագործվում են գյուղական գրոսաշրջային փաթեթներ կազմելու մեջ, սակայն


այդ գործընթացում չեն բացառվում նաև հետևյալներ՝ կրոնական, սպորտային, էքստրեմալ, մանկապատանեական, հնեաբանական և այլն:

Զրոսաշրջային գործարարության մեջ հարկ է ուշադրությունը սկսեռել գյուղական միջավայրի առանձնահատկություններին, ըստ որի էլ իրականացնել հանգստի մի քանի տեսակի համադրությունը: Նման փաթեթները իրենց բազմազանությամբ կարող են միջազգային գրոսաշրջային շուկայում երկրի համար առաջատարություն պահովել: Սակայն գրոսաշրջության որոշ տեսակներ պահանջում են անվտանգություն, առողջապահություն, հիգիենայի և սանիտարական պայմանների բարձր մակարդակ, որոնց որակի համապատասխանությունը գյուղական ենթակառուցվածքներում երբեմն չեն համապատասխանում պահանջվող չափանիշներին: Նման փաթեթներ կազմակերպելիս պետք է նաև սկսուն ուշադրություն դարձնել այդ հանգամանքներին: Պարզապես պետք է ճիշտ գնահատել գյուղական համայնքի գրոսաշրջային ներուժը՝ ստեղծելով շուկայական հարաբերությունների բնույթին համապատասխանող նորարարական տուրիփաթեթներ:



ԲԱԺԻ 2

ԳՅՈՒՂԱԿԱ
ԶՐՈՍԱՀՐՁՈՒԹՅԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊԱՆ
ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ



2.1 ԳՅՈՒՂԱԿԱՆ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՌԱՄԱՐՁԵԾ ՄԴԱՍԱՐԿՎԱՆ ԵԽԹԱՄԱՍԿԱՐԳԵՐԸ

Ներկայումս ամբողջ աշխարհում զբոսաշրջային ենթակառուցվածքների այլընտրանքային տեսակների մեջ մեծ պահանջարկ են վայելում այնպիսի հաստատություններ, որոնք գտնվում են քաղաքային աղմուկից հեռու: Ժամանակակից մարդու ապրելակերպի անհանգիստ առօրյան, լարվածությունը հանգեցնում են քաղաքամերձ շըրջաններում հանգստի համար նախատեսված ենթակառուցվածքների հանդեպ հետաքրքրության աճին: Բարեկարգ սպասարկման ենթամակարգերով գյուղական միջավայրը հոգեկան բավարարվածությունը է ստեղծում մարդկանց մոտ և օգնում հաղթահարել դժվարությունները՝ կոփելով մարդու օրգանիզմը, ֆիզիկապես ու հոգեպես հանգստի վիճակ ապահովելով:

Գյուղական զբոսաշրջություն նախընտրողները գյուղական համայնքների սպասարկման ենթահամակարգերում չեն պահանջում ամենաբարձր մակարդակով իրականացվող սպասարկում, սակայն որոշ նորմեր հարկավոր են պահպաններ: Թեև վերջին տասնամյակում զբոսաշրջության այս տեսակի հանդեպ ցուցաբերվող մեծ ուշադրությունը հանգեցրել է վերոնշյալ հաստատությունների որակական փոփոխությունների առաջընթացին:

Զբոսաշրջության ժամանակակից արդյունաբերությունը կազմակերպական առումով իր գործունեության մեջ ներառում է մի շարք տնտեսվարող սուբյեկտների, որոնք անփոխարինելի դեր ունեն նաև գյուղական զբոսաշրջության կազմակերպման ժամանակ: Դրաք են՝

- զբոսաշրջային կազմակերպությունները (տուրոպերատորներ և տուրգործականներ), որոնք գրադրում են զբոսաշրջային արտադրանքի մշակմամբ և իրացմամբ,
- տեղաբաշխման ծառայություններ մատուցող կազմակերպությունները (հյուրանոցներ, հյուրանոցատիպ հանգրվաններ, զբոսաշրջային տներ, մոթեներ, քեմիքներ և այլն),
- սննդի մասնագիտացված կազմակերպությունները (ռեստորաններ, սրճարաններ և այլն),
- տրանսպորտային մասնագիտացված կազմակերպությունները (ավիաընկերություններ, երկաթուղային, ավտոմոբիլային և ծովային տրանսպորտի կազմակերպություններ),

- գնումների համար նախատեսված առևտրային կազմակերպությունները (հուշանվերների խանութներ, շուկաներ և այլն),
- հանգստի և զվարճանքի կազմակերպությունները (կինոթատրոններ, լողավազաններ, զվարճանքի վայրեր և այլն),
- զբոսաշրջության ոլորտում գործող պետական կազմակերպությունները,
- և այլն:

Գյուղական զբոսաշրջության տուրերը հաճախ գուգորդվում են տեղական գյուղական զբոսաշրջություններին կից ստեղծվում են վերոնշյալ ենթակամակարգերի տարրերից, և ամենակարևորը, որ դրանցում ստեղծում են իրենց տեղանքին բնորոշ կոլորիտ, ինչն էլ ավելի է մեծացնում գյուղական զբոսաշրջության գրավչությունը:

Եվրոպական որոշ երկրներում գյուղական զբոսաշրջությունը դարձել է գյուղական ենթակառուցվածքների դիմամիկ գարգացման, ֆերմերների զբաղվածության ապահովման և ֆինանսավորման լուրջ աղբյուր, եկոլոգիապես մաքուր սննդամթերքի արտադրման ու մատուցման գրավական: Գյուղական համայնքներում սպասարկման ենթահամակարգերը նամփորդությունների կազմակերպման ծառայություններ մատուցելով՝ գյուղացու եկամտի կարևոր աղբյուրներից են հանդիսանում, օրինակ՝ գյուղական բնակավայրերում առկա արհեստանոցներում, հյուշարձաններին կից վաճառակետներում, տեղական արհեստների նմուշների վաճառքը նպաստում է հուշանվերների և զբոսաշրջային նշանակության այլ ապրանքների արտադրությամբ գրադրությունների մասնագիտացմանը: Այս հանգամանքը հնարավորություն է տալիս գյուղերում առևտրային կազմակերպությունների ակտիվացմանը, գյուղական ընտանիքին ֆինանսական աջակցմանը:

Գյուղական միջավայրում գործող սպասարկման ռեսուրսներին հարկավոր է համապատասխան պետական հոգածություն, օրինակ՝ վերահսկման մեխանիզմների և տարաբնույթ կազմակերպությունների գործունեության կողորդինացում, զբոսաշրջության ոլորտի համար բարենպատ պայմանների ստեղծում, գյուղական ենթակառուցվածքների և շրջապատող միջավայրի հանդեպ հասարակական հայացքների ծևավորում և այլն:

Սակայն գյուղական զբոսաշրջության տեսանկյունից երկրի մա-

սին ծևավորված ընդհանուր պատկերը պետք է ամրապնդված լինի նաև այլ գործոններով, ինչպիսիք են՝ տվյալ երկրի գյուղական գրուաշրջային ռեսուրսների համապատասխանությունը միջազգային գրուաշրջային շուկայի պահանջներին, գյուղական բնակավայրերում տարբեր երկրներից ժամանած գրուաշրջիկներին սպասարկելու կարողությունները, սպասարկման ենթակառուցվածքների ընդլայնումը և բարելավումը, արդյունավետ գովազդը և այլն:

2.1.1 ԳՅՈՒՂԱԿԱՆ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՄԵԶ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՅՈՒՐԱՆՈՅԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԸ

Գյուղական գրուաշրջության իրականացման համար անհրաժեշտ գիշերակաց ապահովող կառույցները չեն առանձնանում իրենց բազմազանությամբ, սակայն իրենց յուրօրինակ գործունեությամբ, հարդարանքով ու գտնվելու վայրով ապահովում են եզակիություն ու անկրկնելի գրավչություն:

Հյուրանոցային տնտեսության օբյեկտների տասնյակ տեսակներ գոյություն ունեն, սակայն գրուաշրջության այս տեսակի գործունեության մեջ նախընտրության են արժանանում մի քանիսը:

Զբոսաշրջային տունը հյուրանոցային տնտեսության այն օբյեկտն է, որտեղ մեկ շենքի կամ բնակարանի տարածքում տրամադրվում է գիշերակացի ծառայություն, ինչպես նաև կազմակերպվում և մատուցվում են սննդի ծառայությունները:²¹ Այս տեսակի մեջ մտնում են.

- Հացուկաց, կամ մահճակալ և նախաճաշ - B&B (bed and breakfast),
- Հոսքել – hostel:

Զբոսաշրջիկի համար B&B-ն ամենալավ ճանապարհն է ծանոթանալու տեղական ավանդույթներին, կենցաղային առանձնահատկություններին, քանի որ մեկ հարկի տակ ապրելու է տանտիրոջ հետ: B&B-ներն ուժեղ մրցակից են համարվում գյուղական տարածքներին կից այլ հյուրանոցատիպ հանգրվանների համար: Գյուղական հանգիստ նախընտրողների համար B&B-ներում մրցակցային այդ առավելությունները հատկապես ապահովում են զերմ մթնոլորտը

21 «Զբոսաշրջության և գրուաշրջային գործունեության մասին» ՀՀ օրենք, ընդունված 2003թ. դեկտեմբերի 17-ին, ՇԴՊ 2004/6 (305) 29.01.04, Հոդված 9. Հյուրանոցային տնտեսության օբյեկտները

և հյուրընկալ վերաբերմունքը: B&B-ներում մի քանի սենյակ կարող է ունենալ մեկ լոգարան և մեկ սանհանգույց, թեև երեմն սենյակներն առանձին իրենցն են ունենում (մինչև վեց մահճակալ տրամադրող B&B-ներում մեկ լոգարանը թույլատրելի է):

Հոսքելը էժանագին, կարճաժամկետ բնակության համար նախատեսված, հիմնականում երիտասարդական հյուրանոց-հանգրվան է: Հոսքելի սենյակները նախատեսված են համատեղ բնակեցման համար (մինչև 8 հոգի) և այստեղ բացակայում են լրացուցիչ ծառայությունները:

Հյուրանոցատիպ հանգրվանը հյուրանոցային տնտեսության այն օբյեկտն է, որտեղ մատուցվում են հյուրանոցային ծառայություններ մեկ կամ մի քանի շինություններում են ունենալու 5 սենյակ:

Հոսքելը բնակելի տուն է հարակից պարտեզով՝ ինչպես քաղաքի սահմաններում, այնպես էլ դրանից դուրս: Նախատեսված է մշտական և ժամանակավոր բնակության համար: Կախված հարկերից՝ առաջին հարկում ստվորաբար տեղաբաշխվում է խոհանոցը, սանհանգույցը, իսկ վերին հարկում նշարանները :

Բունգալոն ոչ մեծ քոթեջ է, որը կառուցված է բնության գրկում: Այն հիմնականում նախատեսված է ընտանեկան հանգստի համար: Կառող է ունենալ զնդառնության պատշգամբ և մի քանի հարկ:

Մոթելը հյուրանոցային տնտեսության այն օբյեկտն է, որը գտնվում է ճանապարհների հարևանությամբ, որտեղ մատուցվում են հյուրանոցային ծառայություններ մեկ կամ մի քանի շինություններում: Մոթելում մատուցվում են նաև ավտոմեքենաների կայանման և տեխնիկական սպասարկման ծառայություններ:

Քեմփինգը հիմնականում ավտո-, մոտո- և հեծանվային զբոսաշրջիկների համար նախատեսված ճամբար է: Այն ստվորաբար տեղաբաշխվում է քաղաքից դուրս, երբեմն մոթելների հարևանությամբ: Այստեղ զբոսաշրջիկներին տրամադրվում են գիշերակացի տեղեր վրաններում կամ ամառային տնակներում, որոնք ունեն առաջին անհրաժեշտության հարմարություններ, ինչպես նաև խոհանոց՝ սննդի անհատական պատրաստման համար:

Քաղաքամերձ շրջաններում հանդիպում են նաև հյուրանոցներ, առողջարաններ, հանգստյան տներ, ճամբարային բնակատեղիներ և հյուրանոցային տնտեսության այլ օբյեկտներ:

Գյուղական զբոսաշրջության մեջ կիրառվող հյուրանոցային տընտեսության օբյեկտներին ներկայացվում են մի շարք պահանջներ,

որոնք երեմն ուշադրության չեն արժանանում գիշարակաց տրամադրող գյուղացու կողմից: Դրանք են՝

- հաստատությունը պետք է շինարարական առումով ճիշտ պլանավորված և համապատասխանեցված լինի հյուր ընդունելուն, հյուրի սենյակը տան տիրոջ սենյակներից առանձին պետք է լինի,
- ցանկալի է, որ հաստատությունը, հյուրերի համար ունենա առանձին լոգարան/զուգարան,
- լոգարանում յուրաքանչյուր մարդու համար պետք է լինի նվազագույնը երկու սրբիչ (լողանալու ու երեսը սրբելու), որոնք պետք է փոխվեն երկու օրը մեկ անգամ,
- հաստատությունը պետք է հրդեհանվտանգ լինի,
- կիրառվող էլեկտրա- և զազա- սարքերը պետք է լինեն սարքին, ստուգված և անվտանգ,
- շտապ օգնությունը, հակահրեհային, գազի վթարային ծառայությունները պետք է հյուրի համար հասանելի լինեն,
- սենյակում ու լոգասենյակում գտնվող բոլոր սարքերը պետք է աշխատող լինեն՝ վարդակներ, տաքացուցիչ, լամպ, ցնցուղ, ծորակ, արդուկ և այլն,
- անհրաժեշտության դեպքում սենյակը հյուրի պահանջով պետք է տաքացվելու հնարավորություն ունենա,
- կահույքը պետք է նվազագույնս ապահովված լինի՝ մահճակալ, աթոռ, սեղան, պահարան, հայելի,
- կահույքը պետք է պատշաճ վիճակում լինի, դրա բոլոր կտորները պետք է ծառայեն իրենց անմիջական նպատակին,
- հյուրի սենյակի դռնից դրուս տարածքը/շրջակայքը պետք է մաքուր և աչքին հանո լինի,
- քննելու պարագաները պետք է շատ մաքուր լինեն,
- նախաճաշը կարելի է մատուցել հյուրի սենյակում, ճաշասենյակում կամ տանտիրոջ խոհանոցում,
- նախաճաշը պետք է պատրաստված լինի էկոլոգիապես մաքուր տեղական մթերքից,
- սննդի պատրաստումը պետք է համապատասխանի սանիտարական բոլոր նորմերին,
- սենյակը մաքրելու ժամանակ հյուրը նատելու, սպասելու այլ տեղ պետք է ունենա,
- սենյակը պետք է փակվի բանալիով,
- և այլն:

Գյուղերում երեմն հյուրընկալության տները արտաքին և ներքին հարդարանքում պահպանում են հին կառուցվածքային ոճը, հնամենի կահույքը ու ազգային կիրառական իրերը: Դրանով հետաքրքիր ցուցադրավայրեր են դառնում գրոսաշրջիկների համար և գյուղացու առաջաձեռն, հյուրասեր ընտանիքը անմոռանալի հուշեր է թողնում նամփորդի հիշողություններում:

2.1.2 ՌԱՆՐԱՅԻՆ ՍՆՈՒՆԴ ՄՊԱՍԱՐԿՈՂ ՀԱՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ

Գյուղական միջավայրն իր տարածքում գործող սննդի սպասարկման օբյեկտների առանձնահատկություններից ենելով՝ ունի լայն հնարավորություն ազգային խոհանոցը ներկայացնելու և զարգացնելու դրա արդյունավետությունը՝ ուղղված երկրի, ժողովրդի հանաչմանը:

Հանրային սննդի սպասարկման օբյեկտների տեսակները բազմազան են՝ ռեստորանների տարեր տեսակներ, սրճարաններ, բարեր, բուֆետներ, արագ սննդի սպասարկման օբյեկտներ, պիցցերյաններ, խորտկարաններ, խոհարարական արտադրանքի պատրաստման և իրացման այլ օբյեկտներ: Սակայն քաղաքամերձ շրջաններում դրանց մեծ մասը պահանջարկ չի վայելում:

Այն հանրային սննդի սպասարկման օբյեկտները, որոնք գործում են գյուղական համայնքներում, հիմնականում մատուցում են ազգային ուստեստներ: Ազգային խոհանոցը ծևավորվում է դարերի ընթացքում և համարվում է ազգային նկարագրի վառ օրինակ: Բազմաթիվ գրոսաշրջիկներ ճանապարհորդության ընթացքում կարևորում են համեղ սննդը, և, հիմքե, տվյալ ազգային խոհանոցի ակունքներին ծանոթանալը:

Քաղաքամերձ շրջաններում գտնվող սննդի սպասարկման հաստատությունները, հատկապես էկո-ռեստորաններն առաջարկում են էկոլոգիապես մաքուր սննդի, հաճախ տնական պայմաններում պատրաստված ոգելից և զովացուցիչ ըմպելիքներ, որոնց պատրաստման հումքի հիմնական մասն արտադրվում և անեցվում է շըրջակայրում:

Գյուղական սննդի օբյեկտներն երեմն ունենում են ցուցադրական նախավարներ, որտեղ գրոսաշրջիկները տեսնում են (հնարա-

Վորության դեպքում նաև մասնակցում են) կիսապատրաստվածքների մշակման և կերակրատեսակների պատրաստման գործընթացը:

Դարկ է նշել, որ համայնքային ռեստորաններում ուտեստների տեսականու բազմազանություն այնքան էլ չկա, ինչպես օրինակ՝ քաղաքային մեծ ռեստորաններում, սակայն նրանք առաջարկում են տեղանքին բնորոշ այնպիսի առանձնահատուկ կերակրատեսակներ, որոնք անզուգական են համարվում, եթե մատուցվում են հենց այդ տեղանքում:

Քաղաքամերձ շրջաններում անհրաժեշտ են նաև սննդի այլ սպասարկման հաստատություններ՝ սրճարաններ, բարեր, գինետներ, որոնք, որպես զվարճանքի և ազատ ժամանցի հաստատություններ, բազմիցս օգտագործվում են գուղական գրոսաշրջության կազմակերպման ժամանակ։ Ուտեստների և ըմպելիքների տեսականին այդ հաստատություններում չգետք է սահմանափակել միայն ավանդական և տեղանքին բնորոշ տարրերով, քանի որ օտարի համար մեծ մասսայականություն վայելող սնունդն ավելի հաճախ է օգտագործվում, քան` ազգայինը։

2.1.3 ՀՈՒՉԱՆՎԵՐՆԵՐԻ ՎԱճԱՌԱԿԵՏԵՐ

Օտար երկրում հանգստի նպատակով անցկացրած ժամանակը մարդիկ ցանկանում են իրենց հիշողություններում ամրագրել հուշանվերների միջոցով։ Զրոսաշրջիկների համար նախատեսված ապրանքների և հուշանվերների իրացման վաճառակետերն իրենց կարևորությունն ունեն զրոսաշրջային արդյունաբերության մեջ։

Հուշանվերների վաճառակետերը որոշ չափով զարկ են տալիս ազգային արհեստների, արվեստների վերածնմանը և մասսայականացմանը։ Խեցեգործները, ուլունքագործները, գորգագործները, նկարիչները և այլք իրենց կարողություններն են արտահայտում կենցաղային, ամենօրյա օգտագործման այն իրերի վիճակ, որոնք հետաքրքրում են օտարերկրյա զրոսաշրջիկին։

Գյուղական շրջաններում, քաղաքամերձ հուշարձանների տարածքներում հուշանվերների վաճառակետերի առկայությունը նպաստում է՝

- տվյալ տարածաշրջանին և համայնքին բնորոշ խորհրդանշների, յուրօրինակ արժեքների ի հայտ գալուն,

- տեղանքի ինքնատիպ արտադրատեսակների արտադրության խթանմանը։

Հուշանվերների վաճառակետերը արտադրող վարպետների հետ պետք է իրականացնեն համապատասխան աշխատանքներ՝ տեղական, ծեռքի աշխատանք հանդիսացող հուշանվերների պահանջարկը մեծացնելու ուղղությամբ, օրինակ՝

- հուշանվերները բարձրորակ փաթեթավորելը (անհրաժեշտության դեպքում),
- կիրառելի հուշանվերներ պատրաստելը (որպես տարածաշրջանի անուղղակի գովազդ),
- և այլն։

Հուշանվերների վրա դաշված տեղանունները, պատկերները պետք է ոչ միայն ներկայացնեն ամբողջ երկիրը, այլ կոնկրետ տվյալ տարածաշրջանը, տեղանքը կամ գյուղը։ Որքան զարգացած է տվյալ երկրում զրոսաշրջության ոլորտը, այնքան այդ երկիր բոլոր շրջանների խորհրդանշները ներկայացված են հուշանվերներում։

Գյուղական միջավայրում հուշանվերի վաճառակետը տնտեսապես շատ արդյունավետ է աշխատում։ Այն գյուղացու համար թե՛ աշխատատեղի երաշխիք է, թե՛ զրոսաշրջիկներից եկամուտ ստանալու աղբյուր։

2.1.4 ԶԲՈՍԱՇՐՋԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Զրոսաշրջային կազմակերպությունները միջնորդ են հանդիսանում զրոսաշրջիկի և զրոսաշրջային ապրանքներ ու ծառայություններ արդատադրողի միջև։ Զրոսաշրջային կազմակերպությունները, կախված իրենց գործունեության առանձնահատկություններից և նպատակներից, ունեն մի շարք խնդիրներ՝

- զրոսաշրջիկների պահանջմունքներին համապատասխան՝ զբոսաշրջային գրավիչ առաջարկ թողարկելը,
- զրոսաշրջային արտադրանքի մրցունակության պահպանումը,
- զրոսաշրջիկների համար որակյալ սպասարկում կազմակերպելը,
- մշտական հաճախորդների ցանցի ստեղծումը,
- ֆինանսական կայունության ապահովումը։

Զբոսաշրջային շուկայում ծեռնարկատիրական գործունեության հրականացման տեսանկյունից այս կազմակերպությունները տարրանջատվում են երկու խմբի՝ տուրօպերատորներ և տուրգործականներ: Տուրօպերատորը գրաղվում է զբոսաշրջային արտադրանքի (փաթեթի) ձևավորմամբ, ամբողջականացմամբ և փաթեթի (տուրի) վաճառքով: Իսկ տուրգործակալն իրացնում է զբոսաշրջային արտադրանքը հաճախորդին՝ ծառայությունների համալիր կամ ազատ ընտրության տեսքով:

Տուրօպերատորներն առաջնորդող դերակատարում ունեն, քանի որ նրանց կողմից ձևավորված փաթեթներն են ուղղորդում զբոսաշրջիկներին դեպի տվյալ տարածաշրջան կամ հյուրընկալման ծեռնարկություն: Ըստ գործունեության վայրի՝ տարբերում են արտագնա, ներգնա և ներքին տուրօպերատորներ: Ներքին և ներգնա տուրօպերատորների համակարգված աշխատանքի արդյունքում կարելի է միայն ձևավորել երկրի զբոսաշրջային վարկանիշը:

Գյուղական զբոսաշրջային տուրերի կազմակերպման տեսանկյունից դիտարկելով՝ ներքին և ներգնա տուրօպերատորները պետք է ակտիվորեն աշխատեն դեպի «Այս տարածաշրջան» հետաքրքիր տուր փաթեթներ ծևավորելու ուղղությամբ, քանի որ գյուղական միջավայրում հանգստի նկատմամբ պահանջարկը օրեցօր մեծանում է:

Ներկայում գյուղական զբոսաշրջությունը դարձել է զբոսաշրջության արդյունաբերության առաջատար ճյուղերից մեկը, և զբոսաշրջային կազմակերպությունների կողմից համապարփակ ուշադրության են արժանանում սպասարկման այն ենթահամակարգերը, որոնք ներգրավվում են հանգստի այս տեսակի մեջ: Թեև առամձին գյուղական համայնքների բնական և մարդածին ռեկրեացիոն ռեսուրսները համեմատաբար թիւ չափով են օգտագործվում զբոսաշրջային շուկայում (գյուղական զբոսաշրջությունը, օրինակ, ծովափնյա և լեռնադահուկային զբոսաշրջության նման եկամտաբեր չե, սակայն կարող է կայուն եկամուտ ապահովել):

Գյուղական տարածաշրջաններում առկա զբոսաշրջային ենթակառուցվածքները համապատասխան գովազդային գործունեություն չեն ծավալում, որպեսզի արժանանան տուրօպերատորների ուշադրությանը: Էլեկտրոնային միջավայրում էլ է բավականին թույլ նրանց ներկայացվածությունը: Այս ամենը հաշվի առնելով՝ շահագրգիռ կազմակերպությունների կողմից տուրօպերատորների համար կազմվում են տեղեկատվական-գովազդային նյութեր, քարտեզ-

ներ, իրականացվում են ճանաչողական տուրեր դեպի գյուղական ներ, իրականացվում են այնպիսի տարրեր, որոնք համայնքներ: Այդ տուրերն ընդգրկում են այնպիսի տարրեր, որոնք ամբողջովին ներկայացնում են տվյալ տարածաշրջանին բնորոշ առանձնահատկությունները, հյուրընկալման հաստատությունները և այն բոլոր տարբերակված ծառայությունները, որոնք տուրփաթեր և այն բոլոր տարբերակված ծառայությունները դարձնում են անզուգական: Թի բովանդակությունը ու գրավչությունը դարձնում են անզուգական:

2.1.5 ԳՅՈՒՂԱԿԱՆ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՄԵԶ ԿԻՐԱԾՈՂ ՓՈԽԱԴՐԱՄԻՉՈՅՆԵՐ

Զբոսաշրջային գործունեությունը ենթադրում է մարդկանց տեղափոխումը մի վայրից մյուսը, ինչպես երկրի ներսում, այնպես էլ նրա սահմաններից դուրս: Տրանսպորտային ծառայությունները համարվում են զբոսաշրջիկներին մատուցվող հիմնական ծառայություններից մեկը (հարկ է նշել տուրփաթեթի կարևորագույն բաղադրիչներից մեկը՝ տրանսֆերը, որը զբոսաշրջիկի փոխադրումն է օդանավակայանից, կայարանից հյուրանոց, և հակառակ ուղղությամբ՝ հետ վերադառնալիս):

Գյուղական զբոսաշրջության կազմակերպման ժամանակ փոխադրումները լինում են հիմնական և օժանդակ: Դրանք կատարվում են տրանսպորտային ծառայությունների միջոցով, որոնք կարող են ներառված լինել տուրի կազմի մեջ կամ որոշակի գումարի դիմաց տեղում առաջարկվել: Զբոսաշրջիկը կարող է նաև ինքնուրույն ծեռք բերել տրանսպորտային միջոցը:

Գյուղական զբոսաշրջություն իրականացնող ընտանիքները նախընտրում են ավտոմոբիլային տրանսպորտ. Եթե նույնիսկ օդային տրանսպորտով են ժամանել տվյալ երկիր, վարձակալում են մեքենաներ և ինքնուրույն տեղաշարժվում:

Քայլարշավորդները, ովքեր նախընտրում են հանգրվանել գյուղական միջավայրում, օգտվում են հանրային, միջքաղաքային տրանսպորտից, պատահական մեքենաներից:

Գյուղական զբոսաշրջության մեջ ավտոբուսի, ավտոմեքենայի, հեծանվի օգտագործումը կախված է տվյալ տարածաշրջանի ճանապարհային ծածկույթի որակից (վիճակից) և հարակից ենթակառուցվածքներից (ավտոտեխնիկական հանգույցներ, ճանապարհային սննդի սպասարկման հաստատություններ և այլն): Այստեղ կարևոր-

վում է նաև այն հանգամանքը, թե տվյալ ճանապարհը ինչ նշանակության է՝ միջազգային, հանրապետական նշանակության, վճարովի ավտոռուղիներ և այլն:

Զբոսաշրջության այս տեսակի կազմակերպման ժամանակ երկարուղին, ծովային և գետային տրանսպորտն էլ է համարվում և հիմնական, և՝ օժանդակ փոխադրման միջոց: Այն երկրները, որոնք ունեն ելք դեպի ծով, գրոսաշրջության համար նպաստավոր աշխարհագրական դիրք են գրադեցնում: Օվկիանոսի, ծովի, լճի և գետի ափամերձ շրջաններում փոքրաչափ նավերի վարձույթի հնարավորություններն ավելի են բարձրացնում այդ տեղանքի գրոսաշրջային գրավչությունը:

Գյուղական գրոսաշրջության մեջ որպես փոխադրամիջոցներ կիրառվում են նաև կենդանիներ - փղեր, ուղտեր, ծիեր, ավանակներ, շներ և այլ տեսակներ: Թերևս միայն կենդանիների առկայությունը չի ենթարում, որ նրանց կարելի է համարել «փոխադրամիջոց»: Դրա համար անհրաժեշտ են, որ, օրինակ, ծիերը լինեն խնամված, ունենան հարմարավետ թամբեր, փղերը ունենան համապատասխան նստատեղեր և այլն:

Այսպիսով, տարբեր տեսակի ճանապարհորդությունները՝ կախված երթուղու տեսակից, ճամփորդության տևողությունից, սեզոնայնությունից, մասնակիցների քանակից, օգտագործում են վերոնշյալ տրանսպերտի տեսակները՝ կարևորելով անվտանգությունը, գինը, հարմարավետությունը, արագությունը և այլ գործոններ:

2.2 ԲՆԱԿԱՆ ՈԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԵՎ ՏԵՍԱՐԺԱՆ ՎԱՅՐԵՐԻ ԴԵՐԸ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԵջ

Մշակութային, պատմական և բնական հուշարձանները ուվագ երկրի ազգային սեփականությունն են համարվում: Ուստի տարածքի յուրացումը հանգստի նպատակով պահանջում է համապատասխան վերաբերմունք և հոգածություն:

Քանի որ գյուղական գրոսաշրջությունը հնարավորություն ունի միաժամանակ համարել մի շարք գրոսաշրջության տեսակներ, դրանցում բնական ու պատմամշակութային ուսուրասների արդյունավետ օգտագործմանն ու պահպանմանը հարկավոր է հանգամա-

նակից ուշադրություն դարձնել: Աևեռուն հոգածության պարագանական միայն դրանք կարող են առևտրայնացվել:

Քաղաքամերձ շրջաններն իրենց բնորոշ բնական ռեսուրսներով՝ յում միայն դրանք կարող են առևտրայնացվել:

Քաղաքամերձ շրջանները, անտառածածկույթով, ուկիւթի խայկենարազմազանությամբ, անտառածածկույթով, մշակովի այգիներով և տետարբետությամբ, ջրային ռեսուրսներով, մշակովի այգիներով և տետարբետությամբ, ջրային ռերով մեծ դեր են խաղում գյուղական գրոսաշրջության կազմակերպման մեջ:

Բնության հատուկ պահպանվող տարածքները ներառելով գյուղական գրոսաշրջային արդյունքում իրենց ուժիմների համապատասխան, ավելի բովանդակալից են դարձնում այդ տուրքաթեթերները: Հարկ է նշել, որ բնական ժառանգության օբյեկտների շարքին են դասվում:

- բնական հուշարձանները, որոնք ստեղծվել են ֆիզիկական և կենսաբանական գոյացումներից կամ այդ գոյացումների խմբերից, ունեն եզակի, առանձնահատուկ արժեքներ գիտության և գեղագիտական տեսանկյունից,
- երկրաբանական գոյացումները և խիստ սահմանափակված տարածաշրջանները, որոնք կենդանիների և բույսերի անհետացող տեսակների տարածքներ են և ունեն առանձնահատուկ արժեքներ գիտության և բնության յուրահատկությունների պահպանաման տեսանկյունից,
- բնության տեսարժան վայրերը և խիստ սահմանափակված գոտիները, որոնք ունեն յուրահատուկ արժեքներ գիտության և բնության գեղեցկության պահպանման տեսանկյունից:

Համաշխարհային բնական և մշակութային ժառանգության պահպանման մասին կոնվենցիան ընդունվել է 1972թ. նոյեմբերի 16-ին Միավորված ազգերի կազմակերպության՝ գիտության, կրթության և մշակույթի (ՅՈՒՆԵՍԿՕ - The United Nations Educational, Scientific and Cultural Organization)²² հարցերով Գլխավոր վեհաժողովի 27-րդ նըստաշրջանում: Տվյալ կոնվենցիայի ընդունման անհրաժեշտությունը կապված էր մարդու բնակեցման միջավայրի գլոբալ փոփոխությունների հետ, որոնք ի հայտ եկան 20-րդ դարի երկրորդ կեսին: Այդ իրավիճակում ակնհայտ դարձավ շրջակա միջավայրի պահպանության կարևորությունը, որտեղ մարդը պահպանում է նախորդ սերունդնե-

դից ժառանգած բնական և մշակութային օբյեկտները: Ենթադրվում է, որ բնական և մշակութային ցանկացած օբյեկտ եղակի է, և ցանկացած նմանատիպ օբյեկտի անհետացում բերում է անփոխարինելի կորստի, ուստի նաև՝ այդ ժառանգության պաշարի սակավացման:

ՀՈՒԵՍԿՕ-ի համաշխարհային ցուցակում ներգրավվում են ողջ մարդկության սեփականությունը կազմող բնական և մշակութային այն օբյեկտները, որոնք արժանի են հատուկ վերաբերմունքի, պահպանության և համաշխարհային համագործակցության ուշադրության: Ներկայում այդ ցուցակում մոտ 150 բնական օբյեկտ են:

Գյուղական գրոսաշրջության զարգացման արդյունքում բացահայտվում են բնության, պատմամշակութային նոր արժեքներ, որոնց մի մասը որոշ հիմնավորումներով հայտարարվում է գրոսաշրջային ռեսուրս և դիտարկվում որպես նոր գրավչություններ: Դրանց հիմնավորագործության գործառնությունը պահպանության մշակում են նոր, գրավիչ, մրցունակ գյուղական գրոսաշրջային երթուղիներ:

Զբոսաշրջավայրերի, բնության հատուկ պահպանվող տարածքների արդյունավետ օգտագործումն ապահովող ենթակառուցվածքները քաղաքամերձ շրջաններում ծառայությունների որակի, էկոլոգիական ներկայանակի մակարդակ են ապահովում: Խև բնական ռեսուրսներին կից և տեսարժան վայրերում կազմակերպվող ծիավարությունը, գրոսանքը, հեծանվային արշավները, կենդանական ու բուսական հարստության ուսումնասիրումը համայնքային հանգիստը ավելի բովանդակալից են դարձնում:

Զբոսաշրջության յուրաքանչյուր ծև ունի իր յուրահատկությունը, հետաքրքրությունների իր սահմանը, կազմակերպման ու անցկացման առանձնահատկություններն ու դժվարությունները, ինչը պարտավորեցնում է մասնակցին ունենալ ոչ միայն լավ պատկերացում և գործնական ունակություններ, այլև բավարար գիտելիքներ՝ երթուղու տվյալ հատվածի, նրա անցյալի և ներկայի մասին: Ենելով այդ ամենից՝ կարելի է ասել, որ գյուղական զբոսաշրջությունը հանդիսանում է զբոսաշրջության այնպիսի գործունեության տեսակ, որը տեղի է ունենում բնության և միջավայրի բազմազանության հետ անմիջական շփման ընթացքում: Չնայած զբոսաշրջության առանձին ծևների յուրահատկություններին՝ դրանք բոլորն ել միևնույն նապատակին են ծառայում և լրացնում են միմյանց: Նանգստի միասնական, եզակի ծև պարտադրել մարդկանց հնարավոր չէ, սակայն գյուղական զբոսաշրջությունն իր համադրելիության շնորհիվ, բազմաբովանդակ

հանգստի կազմակերպման հնարավորություններով անսպառ տեսականի կարող է առաջարկել գրոսաշրջիկներին:

2.3 ՏԱՐԱՏԵՍԱԿ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԵջ

2.3.1 ԳՅՈՒՂԱԿԱՆ ՅՈՒՐԱՏԵՍԱԿ ԶԲԱՂՄՈՒՔՆԵՐ

Գյուղատնտեսությունը գյուղի պահպանման և զարգացման առումով միշտ դիտարկվել է որպես գյուղական զբոսաշրջության զարգացման հիմնական բաղադրիչ:

Գյուղաբնիկի համար սովորական դարձած ամենօրյա աշխատանքները զբոսաշրջիկների կողմից ընդունում են որպես առանձնահտուկ հանգստի միջոցներ: Գյուղերում ավելի շատ են պահպանվում ազգին առանձնահատկությունները, ծիսակարգերը, արարողությունները և զբոսաշրջության այս տեսակի լայնածավալ կազմակերպումն ավելի է մեծացնում դրանց վերականգնելու և մասսայականություն վայելելու հնարավորությունները:

Գյուղական զբոսաշրջության մեջ ընդգրկվող յուրատեսակ զբաղմունքներն են՝

- տեղում աճեցված պտուղների բերքահավաքը,
- գյուղմթերքի վերամշակումը,
- ոգելից խմիչքների պատրաստումը,
- մեղրաքամը,
- կաթնամթերքից ուտեստների յուրօրինակ տեսականու պատրաստումը,
- ալյուրից ուտեստների տեսականու պատրաստումը,
- կենդանիների խնամքը,
- ծիավարությունը,
- ձկնորսությունը,
- հողագործությունը,
- ավանդական արհեստագործությունը,
- այլ զբաղմունքներ:

Բացի վերոնշյալից՝ գյուղական գրոսաշրջության այն մասնակիցները, ովքեր ցանկանում են ակտիվ հանգիստ անցկացնել, առաջարկվում է գյուղական աշխատանքի տարբեր տեսակներ, օրինակ՝ փորել մարգերը, քաղիանել բանջարանցը, լցնել կարտոֆիլի բուլք, ինչպես նաև գյուղախնամել պտղատու հատապտուղների թիերը, ինչպես նաև գյուղական այլ հետաքրքրություններ: Իսկ ով ցանկանում է ավելի մոտիվից շփվել կենդանների հետ, կարող է հոգ տանել կենդանիների մասին. առաջարկվում է կերակրել խոզերին, հավերին, բադերին, ճագարներին և այլ կենդանիների, արածեցնել ոչխարներին, այծերին, հորթերին: Այն գրոսաշրջիկները, ովքեր ծիերի մեծ սիրահար են, հնարավորություն ունեն հանգստի ժամանակ ծի խնամել և ծի հեծնած՝ շոշել տարածքով:

Ավելի խաղաղ և հանդարտ հանգիստ նախընտրողների համար առաջարկվում է ձկնորսություն և սեփական որսից ձկնապուր պատրաստելու հնարավորություն:

Այս ամենը հնարավորություն է ընձեռնում՝

- գյուղական համայնքներում կյանքի ակտիվացման,
- առանց մեծ ներդրումների լրացուցիչ եկամտի պահովման,
- գրոսաշրջային սեղոնայնության երկարացման,
- տեղի գաստրոնոմիական առանձնահատկությունների պահպան ման,
- ավանդական արհեստագործության վերակենդանացման:

Իսկ այս գործընթացով հնարավոր առաջացող խոչընդոտներն են՝

- մատուցվող ծառայությունների ցածր որակ,
- տեղի բնակչության օտար լեզվի չիմացություն,
- ներկայացվող ապրանքների ոչ պատշաճ փաթեթավորում,
- գյուղական միջավայրում ազգային կոլորիտի ուրբանացում:

2.3.2 ԱԶԳԱՅԻՆ ԻՐԱԴԱՇՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՏՈՆԱԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԴԳՐԿՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՄԵջ

Օրեցօր ավելանում է այն մարդկանց թիվը, ովքեր իրենց ուշադրությունը սեղում են դեպի գրոսաշրջության ոլորտի ընձեռած հնարավորությունների բազմազանությանը: Տարբեր մշակույթի, կենցաղի վորությունների բազմազանությանը:

յուրահատկությունների հանդեպ ցուցաբերվող հետաքրքրությունները հնարավոր է բավարարել գյուղական գրոսաշրջության միջոցով: Զբոսաշրջության այս տեսակի մասնակիցները ցանկանում են անմիջապես հաղորդակից լինել տարբեր ժողովուրդների ազգային առանձնահատկություններին, ավանդույթներին և ապրելակերպի այլ դրսևորումներին:

Գյուղական գրոսաշրջության մեջ ազգային ստվորույթների, տունակատարությունների ցուցադրումը պահանջում է մանրակրկիտ ծրագրում, մանրութների նկատմամբ մեծ ուշադրության ցուցաբերում և այլն: Եթշտ ընտրված ժամանակահատվածը տոնակատարության կարևոր նախապայմանն է, որին նաև գրոսաշրջիկներն են ցանկանում անմիջապես մասնակցություն ունենալ, այդ իսկ պատճառով է հարկավոր է պատրաստ լինել նաև նման իրադրություններին:

Գյուղական համայնքներում կազմակերպված իրադրությունները բավականին մեծ ակտիվություն են ստեղծում տվյալ համայնքում: Դրանք ուղեկցվում են մի շարք կազմակերպչական գործնթացներով, որոնցից է, օրինակ, գովազդատեղեկատվական արշավների կազմակերպումը, հուշանվերների կամ ուստեստների վաճառակետերով տաղավարների գործունեության կազմակերպումը, աղքահանումը, սնունդ սպասարկող ժամանակավոր տաղավարների ապահովումը, մշակութային խմբերի ներկայացումների համար հարմարավետության ստեղծումը և այլն: Նույնիսկ հարկ է առաջանագնել համապատասխան տարածքներ ավտոկայանատեղիների համար, որոնք նույնական վճարովի են լինում և տեղացու համար դարձյալ հանդիսանում են որպես եկամտի աղբյուր:

Տեղացիներն այս իրադրություններից բավականին շահույթ են ստանում և առաջիկա ամբողջ տարվա ընթացքում նախապատրաստում են հաջորդ իրադրությանը:

Վերջին շոշանում իրադրավային գրոսաշրջությունը մեծ ծավալում է գտնել ամբողջ աշխարհում, և գյուղական համայնքները իրենց ավանդական տոնակատարություններով համապատասխան գովազդատեղեկատվական գործունեություն ծավալելու դեպքում, կարող են շատ հետաքրքիր այցելավայր համարվել գրոսաշրջության այդ ուղղությունը նախընտրողների համար: Նման միջոցառումները նպաստում են նաև ներքին գրոսաշրջության զարգացմանը:

2.4 ԳՅՈՒՂԱԿԱՆ ԶԲՈՍԱՀՐՁՈՒԹՅԱՆ ՄԵԶ ՆԵՐԳՐԱՎԿԱԾ ՄՊԱՍՏՐԿՈՂ ԱՆՁՆԱԿԱԶՄԸ

Գյուղական զբոսաշրջության մեջ ներգրավված ենթակառուցվածքներում մարդկային ռեսուրսները հիմնականում իրենց ցուցաբերած սպասարկման մակարդակով լիարժեք չեն բավարարում ժամանակակից պահանջներին: Քանի որ համայնքներում զբոսաշրջության ոլորտը դիտարկվում է որպես գործարար միջավայրի աշխուժացման հիմնալի միջոց, բազմաթից երկրներ գյուղական զբոսաշրջային կենտրոններում մարդկային ռեսուրսների համար հրականացնում են կրթական, վերապատրաստման ծրագրեր:

Գյուղերի հյուրընկալման ոլորտում որակյալ կադրեր ունենալու համար անհարժեշտ է:

- առկա աշխատուժի համար մշակել վերապատրաստման ծրագրեր,
- շուկայի պահանջարկին համապատասխան՝ ապահովել գյուղական տարածքներում գործող սպասարկման ոլորտի կրթական հաստատությունների, գործատուների և շահագրդի մարմինների արդյունավետ համագործակցություն,
- բարեկավել հյուրընկալման ոլորտում աշխատողների օտար լեզուների հմացությունն ու գործածության կարողությունները,
- խրախուսել երիտասարդների ընդգրկվածությունը համայնքային սպասարկման հաստատություններում:

Հյուրընկալության ոլորտում զբոսաշրջիկների հանդեպ ցուցաբերվող ուշադրությունը և եթիկայի նորմերի պահպանումը առավելագույն պետք է կարևորել:

Հատկապես գյուղական զբոսաշրջության ուղղությամբ գործունեություն ծավալելիս անհրաժեշտ է պահպանել մի շարք նորմեր, որոնք կնպաստեն տվյալ տարածաշրջանի զբոսաշրջային վարկանիշի բարձրացմանը:

Ստորև ներկայացվում են որոշ վարեկալերայի վարքականուներ, որոնք պետք է պահպանել գյուղական միջավայրում զբոսաշրջության ոլորտում ներգրավված աշխատակազմի կողմից:

- Զբոսաշրջիկները, որոնք հանգրվանելու են գյուղական միջավայրում, տներում, և որոշ չափով ընդհանուր կենցաղ են վարելու

տանտերերի հետ, պետք է զգան, որ իրենց անկեղծ ուրախ են այդտեղ տեսնել:

- Գյուղատնտես-հյուրընկալի կողմից ստեղծված գործնական վարքագիծը պետք է համակցել բայրացակամ հայացքով և բարի վարվելակերպով, ինչն էլ ստեղծում է ընկերական մթնոլորտ ու ավելի դյուրին է դառնում սպասարկումը:
- Հյուրին պետք է ընդունել այնպիսին, ինչպիսին նա կա: Մի քանի րոպե շփումից հետո հարկավոր չէ նրան փորձել փոխել: Բաղադրավարության սահմանը պետք չէ անցնել, որպեսզի քննանքի չվերածվի: Բաղադրավարությունը տարբեր ազգային պատկանելություն, տարիք, բնավլություն ունեցող մարդկանց հետ շփման հարցում ամենահիմնական միջոցն է:
- Տանտերերը, այգեգործները, ֆերմերները պետք է աշխատեն ֆիզիկական ծանրաբեռնվածությունն օրվա ընթացքում այնպես բաշխել, որ հյուրերի ժամանման հիմնական ժամերին կարողանան նրանց առավելագույն ուշադրություն դարձնել:
- Տանտերերի ուշադրի լինելը գյուղական այդ միջավայրում բարոյա-հիգիենական մթնոլորտի ստեղծման հիմնական պայմանն է: Անուշադրությունը այցելուների հանդեպ դրական փոխհարաբերությունների պահպանման ամենամեծ թշնամին է:
- Գյուղատնտես-հյուրընկալը պետք է գիտակցի, որ զբոսաշրջիկի համար ամեն ինչ նոր է տվյալ միջավայրում, ու զբոսաշրջիկի կողմից ամենաանկանխատեալի վարքականոնի դրսերման ժամանակ է արհամարհական կամ ագրեսիվ վերաբերմունք չդրսերի:
- Զբոսաշրջիկի հետ ստեղծված ցանկացած անախորժ պահերի ժամանակ պետք է կարողանալ տիրապետել իրավիճակին և խուսափել չափից ավելի բորբոքվելոց:
- Գյուղացու անմիջականությանը բնորոշ անտեղի նկատողություններ հարկավոր չէ անել գյուղական զբաղմունքների մեջ ներգրավված զբոսաշրջիկին, պետք է բավարարվել թեթև խրատներով, նիշտ գործելու ծները ցուցադրելով, և խուսափել համեմատականներ անցկացնել զբոսաշրջիկի երկրի նմանատիպ գործունեությունների հետ:
- Գյուղական միջավայրի հյուրընկալության ենթակառուցվածքներում ոչ պատշաճ մաքրության հանգամանքը երեմն զբոսաշրջիկի կողմից բացասական արձագանքների է հանգեցնում, նման

նկատված կոպտություններին հարկավոր է պատասխանել գուսական քաղաքավարի:

- Չբոսաշրջիկի կողմից կատարված դիտողություններն ու առաջարկությունները երեք չպետք է թողնել առանց ուշադրության:
- Գիշերակաց ապահովող տներում, որտեղ գյուղական գրոսաշըրջիկները ավելի անմիջական վերաբերմունքի են արժանանում, երբեմն իրենց բոլոր են տալիս նկատողություններ անել կենցաղվարության որևէ հարցում: Հարկավոր է անկեղծ և ժամանակին ներողություն խնդրել, դա նվաստացում չէ, այլ ուղերձ՝ ուղղված սպասարկման մակարդակը հնարավորինս բարելավելուն:
- Գյուղատնտեսի ամեն արարք պետք է հիմնավորված լինի, որ պեսզի գրոսաշրջիկի մոտ դրանց արդարացի, ճիշտ լինելու վերաբերյալ կասկած չառաջանա:
- Պետք է գյուղական միջավայրում յուրաքանչյուր գործ կազմակերպել այնպես, որ բարձր պահի գյուղատնտեսի, գյուղի, երկրի գրավչությունն ու վարկանիշը:


Հաճախ գյուղական հյուրընկալող տներում դժվարություններ են առաջանում կապված ազգային առանձնահատկությունների հետ: Չբոսաշրջիկների պահելաձնը բնորոշում է նրանց հայացքները նորը ընկալելու հանդեպ և հյուրերի պահելաձնի վրա ազդեցություն է ունենում ոչ միայն նրանց բնավորության տեսակը, այլև՝ պահի ազդեցությունը:

Սովորաբար գրոսաշրջիկները գյուղական տներում ունենում են անհիասկանալի պահելաձն: Այն իրենից ենթադրում է փոխադարձ շփման ժամանակ կենցաղում առաջացած տվյալ երևույթին տված այլ ծևաչափի գնահատական, որը տանտերերի արժեքային համակարգին այնքալ էլ չի համապատասխանում:

Սակայն այս ամենը չի նշանակում, որ պետք է ամեն ինչի հետ համաձայնել, եթե նույնիսկ այցելուն սխալ է: Նման դեպքերում առանց առարկության գործը չի ստացվում, բայց պետք է խելամիտ վարվել ու համապատասխան բառեր օգտագործել, օրինակ՝ “իհարկե, շատ բաներում դուք ճիշտ եք, բայց ...”: Կոպտությունը, նույնիսկ արդարության և խլամտության ժամանակ, ամենավնասաբերն է: Վերջապես պետք է գիտակցել, որ շփումը խոսքի և արտահայտիչ շարժուծների միջոցով, մտքերի ու զգացմունքների փոխանակման հիման վրա ստեղծված փոխհարաբերություն է:



Վերոնշյալ դրույթները գյուղական գրոսաշրջության մեջ ներգրավված աշխատակազմի համար պետք է դառնա համոզմունք, քանի որ նրանք մուտք են գործում գրոսաշրջության ոլորտ, որն իրենից ամբողջությամբ ենթադրում է սպասարկում և ծառայությունների մատուցում, ինչի արդյունքում որոշ չափով բարելավվում է տվյալ գյուղական միջավայրի, տարածաշրջանի ապրելակերպը:

Անհրաժեշտ է հնարավորինս հասկանալի դարձնել այն միջավայրը, որտեղ գրոսաշրջիկնը անցնելու ընդամենը մի քանի օր:



ԲԱԺԻ 3

**ԳՅՈՒՂԱԿԱ
ԶԲՈՍԱՀՐաՌԱՅԻ
ԶԱՐԳԱՑՄԱՆ
ՓՈՐԱԸ ՄԻ ՀԱՐՔ
ԵՐԿՐՈՒՄ**



Որպես յուրահատուկ տուրապրանք՝ գյուղական գրոսաշրջությունը մասսայականություն է սկսել վայելել Արևմտյան Եվրոպայում: Ֆրանսիան, Իսպանիան, Ավստրան և մի շարք այլ արևմտաեվրոպական երկրներ գյուղական գրոսաշրջության ոլորտում իրենց ծավալած գործունեությամբ հիմնավորեցին այն փաստը, որ գյուղական բնակավայրերում գումար վաստակելու համար, բացի գյուղատնտեսական մշակաբույսեր աճեցնելուց և անասնապահությամբ գրաղելուց, կարելի է նաև մասնագիտորեն գրաղվել հյուրընկալությամբ:

Գյուղական գրոսաշրջությունը տարբեր միջոցներով կարող է ազդեցություն ունենալ համայնքների զարգացման և բնակչության կենսամակարդակի բարձրացման վրա:
Ոլորտում ստեղծված աշխատատեղերը և դրանց արդյունքում ծնավորված եկամուտները հանդիսանում են տեղի բնակչության կողմից գյուղական համայնքները չլրելու շարժադրիք:

Ստորև ներկայացված են մի շարք երկրներում գյուղական գրոսաշրջության զարգացման վարկածները:

3.1 Ֆրանսիա

Ֆրանսիայում 1950-ական թվականներին նկատվում էր ոչ հեռանկարյաին գյուղական շրջաններից բնակչության արագընթաց արտահոսք դեպի խոշոր քաղաքներ: Երկրում մի կարճ ժամանակահատված կտրուկ նվազեցին ֆրանսիացիների համար մեծ հապատություն համարվող գինու և պանրի արտադրման ծավալները: Այս ամենը լուրջ մտահոգության ալիքը բարձրացրեց պետական կառավարման հարթակներում: Դետության կողմից նախագծված մի շարք ծրագրերի իրականացման արդյունքում վերականգնվեցին տասնյակ տնտեսություններ՝ ազարակներ, պանրագործարաններ, գինեգործական տնտեսություններ: Նոր կազմակիրվող տնտեսությունների տերեր ընտրվեցին երիտասարդ ամուսիններ, որոնք ել իրենց գործունեության մեջ ավելի նկուն կառավարչական գործեակերպ դրսութելով՝ մեծ մասն արագորեն ինտեգրվեցին գյուղական գրոսաշրջության գործառությունների մեջ՝ առավել շահավետ ձեռնարկատիրական գործունեություն ունենալու համար:

3.2 Իտալիա

Իտալիայում գյուղական գրոսաշրջությունը սկսել է զարգանալ 1970-ական թվականներին: Ենթադրվում էր, որ գրոսաշրջային ձեռներցությունն ազարակատերերի համար ոչ մասնագիտական գործունեություն է, ու հնարավորություն կը նձեռներ առանց մեծածավալ ներդրումներ կատարելու բարեփոխել ֆինանսական վիճակը:

Գյուղական գրոսաշրջությունն իր առաջացման սկզբնական շօրջանում բավականին մատչելի հանգիստ էր առաջարկում, սակայն միաժամանակ որպես հանգստի ոչ ավանդական տարբերակ՝ չէր վայելում մեծ հեղինակություն: Դետագայում իրավիճակը սկսեց փոփոխվել:

Ներկայում ներկայացնեալ մարզերի շրջանում ագրոֆերմաների մեջ զիսավորող դերակատարում ունի Տուկանան՝ ամբողջ ագրոտնտեսության 34%, Ումբրիան՝ 14%, Սիցիլիան՝ 7%: Մեծ է իտալիայի գյուղատնտեսների կողմից առաջարկվող ծառայությունների բազմազանությունը: Գյուղական միջավայրում հանգիստը հատկապես համարում են գրոսաշրջության մի շարք տեսակներով. ազգային գաստրոնոմիա, բնություն և կազդուրում, հեծանվային սպորտ, ձիերով գրոսանք և այլն:

Իտալիայում յուրաքանչյուր ագրոֆերմա ունի իր նեղ մասնագիտական առանձնահատկությունը և արտադրում է մթերքների այն տեսականին, որոնք բնորոշ են հատկապես տվյալ տարածաշրջանին:

Իտալիայի գյուղական գրոսաշրջությանը նպաստող գործունեություն դիտարկվում ներքոնշյալ գործընթացները.

- աշխարհում մեծանում է հետաքրքրությունն էկոլոգիական գրոսաշրջության հանդեա՝ որպես բնության գրկում հանգստի կազմակերպման տեսակ, իսկ գյուղական գրոսաշրջությունը հիանալի կերպով ներգրավել է էկոգրոսաշրջության մեջ՝ որպես ժամանակակից հետաքրքրություն վայելող ուղղություն,
- արևմտյան Եվրոպայի զարգացած գրոսաշրջային շուկաներում հետաքրքրությունը նվազեց հանգստի ավանդական տեսակների նկատմամբ և նոր տուապրանքի պահանջարկ առաջացավ,
- գյուղական գրոսաշրջության զարգացմանը նպաստել են նաև սոցիալական գործուներ, օրինակ, որպես հանգստի մատչելի տարբերակ, շատ հարմար էր բազմազակա ընտանիքների և երիտասարդների համար:

3.3 Գերմանիա

Գերմանիայում գյուղական գրոսաշրջության զարգացման մեկնարկը կապված էր երկրի ծայրամասերում հանգստի այդ տեսակի նկատմամբ ցուցաբերած հետաքրքրասիրությամբ: Դրա արդյունքում գերմանական գյուղական գրոսաշրջության շուկայում այսօր ներկայացվում են բնության գրկում հանգստի էժանագին առաջարկներ՝ առանց թանկարժեք ենթակառուցվածքների օգտագործման:

Ինչպես Գերմանիայում, այնպես էլ Եվրոպական մի շարք երկրներում գյուղական գրոսաշրջության զարգացման նախապայմաններից է գյուղատնտեսական նգնաժամը:

Հետաքրքրական է Բավարիայի ագարակներից մեկի օրինակը: Ըստ այդմ բավարիացի մի գյուղատնտես, ունենալով ընդամենը 30հա հողատարածք, իր հողատնտեսական աշխատանքներով չեր կարողանում դիմակայել տարածաշրջանում գոյություն ունեցող մրցակցությամբ: Նա ամբողջովին բարեկարգում և վերափոխում է իր ագարակը՝ դարձնելով գյուղական գրոսաշրջության այցելավայր: Ազգարակում գործող սրճարանի տարածքում նա տեղադրում է ջրահաց, ցախանցում հավաքում հնատն գյուղական սարբավորումների բավականին հարուստ տեսականի, կառուցում արհեստական լճակ, որտեղ սկսում է անեցնել տեղանքի ֆլորային և ֆաունային բնորոշ բավականին մեծ տեսականի: Կարճ ժամանակում թիզ եկամտաբեր ագարակը վերածվեց ծաղկող գյուղական գրոսաշրջային տնտեսության, որտեղ գրոսաշրջիկներին առաջարկում էին բնության գրկում հանգիստ և էկոլոգիապես մաքուր սնունդ:

3.4 Զեխիա

Զեխիայում գյուղական գրոսաշրջությունը գնալով ավելի ու ավելի մեծ տարածում է գտնում: Երկրում, որպես գյուղական գրոսաշրջության ռեսուրս, մեծ հոչակ են վայելում Ավստրիայի և Գերմանիայի սահմանակից շրջանների ագարակները: Տարածաշրջանային այցելությունների հիման վրա այդ տարածաշրջաններում գյուղատնտեսները մեծածավալ աշխատանքներ են իրականացրել գյուղական գրոսաշրջության զարգացման ուղղությամբ: Զեխիայում գյուղական գրոսաշրջության զարգացմանը խոչընդոտ է հանդիսացել առաջ-

նահերթ ներդրումների համար ֆինանսական միջոցների պակասությունը: Թերևս բացառություն է կազմել Մորավսկո-Սիլեզյան շրջանը, որտեղ ֆինանսական դուտացիաների միջոցով օժանդակել են գյուղական գրոսաշրջային ռեսուրսներին. տեղի իշխանություններն ակնկալում են, որ գյուղական գրոսաշրջության զարգացման հետ մեկտեղ կնվազի գործադրկությունը: Որոշ հետազոտողների կարծիքով՝ Զեխիայում գյուղական տնտեսվարողների մոտ գյուղական գրոսաշրջությունը դեռևս օժանդակ աղբյուր է և ոչ թե՝ հիմնական եկամուտ :

3.5 Սլովենիա

Սլովենիայում գյուղական գրոսաշրջության զարգացման համար առավել քան նկատելի է պետության աջակցությունը: Այսպիսով, Սլովենիայում գյուղտնտեսության և անտառային տնտեսության նախարարության մասնակցությամբ, 1997 թ.-ին ստեղծվել է Սլովենիայի գրոսաշրջային ագարակների միությունը, որը հանդիսանում է ոչ կառավարական և ոչ կոմերցիոն կազմակերպություն: Սույն միության ստեղծման նպատակը հետևյալն է:

- բարձացնել գյուղական գրոսաշրջության կողմից առաջարկվող տուրապրանքի որակը,
- բարելավել գյուղական բնակավայրերի պայմանները,
- ապահովել գրոսաշրջիկների հոսք դեպի գյուղական բնակավայրեր,
- նպաստել գյուղական շրջանների զարգացմանը և պահպանել գյուղացու եզակի արհեստներն ու ժողովրդական սովորույթները:

Միությանը մասնագիտական օգնություն են ցուցաբերում գիտահետազոտական ինստիտուտները, հատկապես Յեկե քաղաքի Գյուղատնտեսական և անտառատնտեսության ինստիտուտը, որտեղ և գտնվում է Միության դեկանալարման կենտրոնը:

Միջինում Սլովենիայի գրոսաշրջության մեջ ներգրավված ազրութերմանների ծանրաբեռնումը կազմում է տարեկան 75 օր: Դրա հետ մեկտեղ, այն ազրութերմանները, որոնք գտնվում են գրոսաշրջային կենտրոնների, բուժառողջարանների և լեռնադահուկային կենտ-

րոնների անմիջական հարևանությամբ՝ զբաղված են տարեկան ավելի քան 150 օր:

Սլովենիայի գյուղական գրոսաշրջության գործարարության մեջ ընդունված է ծառայությունների որակը գնահատելու պարտադիր վկայական: Որակավորման միջոցառումն անցկացվում է երեք տարին մեկ անգամ: Վկայականի տվյալներով ագրոֆերմային տրվում է որակավորման մեկից չորս կարգ, որը նշվում է «խնձորներով»²³: Դրա համատեքստում գնահատվում է ագրոֆերմաների ներքին հարմարավետության որակը, ինչպես նաև հյուրերի ազատ ժամանակը կազմակերպելու հնարավորությունները, նրանց սնունդը և այլն:

Այս երկրում գյուղական գրոսաշրջությունը զարգանում է նաև ներքին գրոսաշրջության հաշվին: Իսկ Սլովենիայում այլ երկրներից գրոսաշրջության այդ ուղղությունը նախընտրում են գերմանացիները, իտալացիները և խորվաթները:

3.6 Կիպրոս

Կիպրոսն առաջատար տեղ է զբաղեցնում հանգստի մասսայական ուղղությունների շարքում, սակայն այստեղ էլ գյուղական գրոսաշրջությունը ցուցաբերել է զարգացման աննախադեպ տեմպեր: Գյուղական գրոսաշրջության զարգացման հայեցակարգի հիմքում խնդիր էին դրել գրոսաշրջային գերձանքաբեռնված շրջանները թերևացնել՝ ուղղորդելով այդ հոսքերը դեպի գյուղական միջավայրում կազմակերպվող հանգստը:

Կիպրոսում գյուղական գրոսաշրջության զարգացումը կապվում է հետևյալ հանգամանքների հետ՝

- կղզու հեռավոր լեռնոտ շրջաններում ստեղծվել են բարձրակարգ գրոսաշրջային ենթակառուցվածքներ,
- գրոսշրջության սեզոնայնությունը երկարածվել է, քանի որ գյուղական գրոսաշրջությունը նպաստում է այդ հիմնախնդրի որոշ չափով դրական լրտեմանը,
- գրոսաշրջային մեծ հոսքերի հաշվին գյուղերում առաջանում էն նոր աշխատատեղեր:

Գյուղական գրոսաշրջության զարգացումը նպաստեց կիպրոսյան գյուղի ազգային կերպարի, մշակութային ժառանգության պահպանությանը և բարենպաստ ազդեցություն ունեցավ շրջակա միջավայրի պահպաման գործում:

Գյուղական գրոսաշրջության զարգացումը կատարվում է ոչ միայն Եվրոպայում և հանգստի համար մասսայակություն վայելող երկրներում, այլև այնպիսի երկրներում, որոնք չունեն հաստատում գյուղատնտեսական մասնագիտացում. օրինակ՝ Սինգապուր, Մալազիա, Չին-Լանկա և այլ երկրներ:

3.7 Մալազիա

Մալազիայում գյուղական գրոսաշրջության զարգացումը առաջին հերթին պայմանավորված է գյուղատնտեսական պարկերի ստեղծմամբ, որոնք հիմնականում պետական կազմակերպություններ են: Դրանց նպատակն է ներկայացնել ազգային գյուղատնտեսությունը, և թե ինչպես է հնարավոր դրանք գրոսաշրջության գործածարության մեջ ներառել ու լրացնել եկամտի աղբյուր ստեղծել:

Մալազիական առաջին պետական գյուղատնտեսական պարկը հիմնադրվել է 1986թ.-ին Գյուղատնտեսության նախարարության նախաձեռնությամբ՝ որպես գրոսաշրջա-ցուցադրավայր: Այն նաև հետազոտական կենտրոն էր, որը նպատակ էր հետազնդում զարգացնել և հանրամատչելի դարձնել երկրի գյուղատնտեսությունը:

Ներկայում ամբողջ երկրով տարածված են նման պարկերը, որոնք համարվում են պետության սեփականությունը (այդ պարկերից շատ քչերն են գտնվում ազարակատերերի միությունների սեփականության ներքո): Այդ տարածաշրջանները գրոսաշրջկենդին առաջարկում են բնակություն ավանդական գյուղական կացարաններում հյուրատուն, շալե կամ հյուրանոցատիպ հանգրվաններ, որոնք շրջապատված են ջունգլիներով կամ տեղական մշակաբույսերի պլանտացիաներով, առաջարկում են նաև ազգային խոհանոցի համտեսում, գյուղատնտեսական աշխատանքներին մասնակցելու հնարավորություն ու տարեք տեսակի զվարճանքներ՝ գրոսանք ծիերով կամ պոնիներով, նավակներով թիավարություն, ինչպես նաև ծկնորսություն: Գյուղատնտեսական պարկերի տուրերի մեջ ներա-

23 URL: <http://social-culture.ru/index.php?request=full&id=196>


ռում են նաև այցելություններ կաթնամթերքի խոշոր գործարաններ և 19-րդ դարի սկզբին հիմնադրված պատմական գյուղեր:

3.8 Հայաստան

Հայաստանում գյուղական գրոսաշրջության զարգացումը դեռ սկզբանակ փուլում է գտնվում: Սակայն իրականացվում են բազմաթիվ ծրագրեր, որոնք իրենց շշուակի ներդրումն են ունենում գրոսաշրջության այս տեսակի առաջնադաշտան մեջ: Նման ծրագրերում կարևորվում է համայնքների երիտասարդների ներգրավվածությունը, քանի որ դա նպաստում է ոչ քաղաքային բնակավայրերում երիտասարդության զբաղվածության ապահովմանը, որոշ չափով աղքատության հաղթահարմանը և արտագաղթի խոչընդոտմանը: Հայաստանի գեղատեսիկ բնությունը, պատմամշակութային հարուտ ժառանգությունը, հայկական խոհանոցի առանձնահատկությունները և հյուրընկալման զերմությունը կարևոր դեր են խաղում գյուղական գրոսաշրջության զարգացման համար:

Ներկայում գյուղական համայնքներում գործում են բազմաթիվ հյուրընկալող և գիշերակաց ապահովող հանգրվաններ, ելուղիական գյուղատեղիներ, գինեգործներ, կաթ վերամշակողներ, որոնք իրենց գործունեության մեջ չեն բացառում հյուրընկալում՝ գիտակցելով դրա կարևորությունը երկրի համաշափ զարգացման գործում:


Թեև վերոնշյալ երկրների համեմատությամբ Հայաստանը չի կարող մրցակցության դաշտում դիմակայել գյուղական գրոսաշրջության առաջատարների կողքին, այդուհանդերձ, ներգրավելով տարածաշրջանային տուրիստերների մեջ՝ հնարավարություններ կունենա մեծացնել երկրի գյուղական գրոսաշրջային արտադրանքի գրավչությունը:





ԲԱՐԵԿ

ԳՅՈՒՂԱԿԱ ԶԲՈՍԱՀԵՐՁՈՒԹՅԱՆ ԶԱՐԴԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՇԵԽԱԿԱՐՆԵՐԸ



4.1 ԳՅՈՒՂԱԿԱՆ ԶԲՈՍԱՀՐՁՈՒԹՅՈՒՆ ՈՐՊԵՍ ԿԱՅՈՒՏ ԶԲՈՍԱՀՐՁՈՒԹՅԱՆ ԲԱՂԱԴՐԻԳ

Ըստ Առևտրի համաշխարհային կազմակերպության (WTO - World Trade Organization)²⁴ կողմից տրված սահմանման՝ կայուն գրոսաշըրջության նպատակը հանդիսանում է գրոսաշըրջության զարգացման հետևանքով առաջացող տնտեսական և սոցիալական առավելությունների պահպանումը՝ միաժամանակ նվազեցնելով կամ մեղմելով անցանկալի հետևանքները բնական, մշակութային, պատմական և սոցիալական միջավայրի վրա:

Կայուն գրոսաշըրջության հայեցակարգի հիմքում ընկած է թողունակության հասկացությունը: Դա որևէ գրոսաշըրջային օբյեկտի առավելագույն ծանրաբեռնվածությունն է, որը վնաս չի հասցնում տեղական ռեսուրսներին, բացասաբար չի անդրադառնում գրոսաշըրջիկների տպավորությունների վրա, չի առաջացնում սոցիալ-տնտեսական խնդիրներ տեղի բնակչության հետ:

Թողունակությունը սովորաբար լինում է երեք տեսակի՝

- գրոսաշըրջային սոցիալական թողունակություն - դեստինացիայի այցելությունների որոշակի քանակ է, որի գերազանցումը հանգեցնում է գրոսաշըրջային տպավորությունների անկման,
- տեղային սոցիալական թողունակություն - այցելությունների որոշակի քանակ է, որի գերազանցումը բացասաբար հետևանքներ է ունենում տեղի մշակութի վրա, և բարդեցնում է տեղի բնակչության և գրոսաշըրջիկների հարաբերությունները,
- էկոլոգիական թողունակություն- դեստինացիայի այցելությունների որոշակի քանակ է, որի գերազանցումը հանգեցնում է անընդունելի էկոլոգիական հետևանքների, ինչը կարող է տեղի ունենալ գրոսաշըրջիկների գործողությունների կամ գրոսաշըրջային ենթակառուցվածքների գործունեության արդյունքում:

24 Առևտրի համաշխարհային կազմակերպությանը (URL: www.unwto.org) ՀՀ-ն անդամակցում է WTO-ին 2003թ.՝ լիիրավ անդամի կարգավիճակով:

ՄՐԿ կանոնները կարգավորում են միայն առևտրատնտեսական հարաբերությունները: ՄՐԿ-ի խնդիրն է ոչ միայն միասնական կանոնների մշակումը, այլև վերահսկողության իրականացումն անդամ երկրների կողմից ստանձնած պարտավորությունների կատարման նկատմամբ հատուկ ստեղծված մեխանիզմի և ՄՐԿ-ի շրջանակներում գործող վեճերի կարգավորման մարմնի միջոցով:

Վերոնշյալ խնդիրները հանգեցրին նրան, որ 1997թ. UNWTO-ն (United Nations World Tourism Organization)²⁵ առաջարկեց տալ գրոսաշըրջության տարրողներակության սահմանում: Ըստ դրա՝ գրոսաշըրջության տարրողներակությունն այն մարոկանց քանակությունն է, որը կարող է միաժամանակ այցելել նպատակակետ՝ չհանգեցնելով շրջակա միջավայրը ֆիզիկական, տնտեսական և սոցիալ-մշակութային քայլայման, ինչպես նաև՝ այցելուների բավարարվածության աստիճանի անկման: Գյուղական գրոսաշըրջությունը ներգրավում է երկրի բնական, պատմամշակութային և սոցիալական ժառանգության ռեսուրսները: Զբոսաշըրջության հետևանքով դրանց վկա առաջացած ցանկացած բացասական ազդեցություն բացասաբար է անդրադառնում նաև. Երկրի գրոսաշըրջային արդյունաբերության վրա: Տընտեսական, սոցիալական ոլորտներում և շրջակա միջավայրի պահպանության երկարաժամկետ գործընթացները պետք է գերակայեն այնպիսի կարճաժամկետ նվաճումներից, որոնք կարող են բացասաբար անդրադառնալ որևէ երկարաժամկետ զարգացումներին:

Զարգացող գյուղական գրոսաշըրջային գործունեությունը հարկավոր է ուղղորդել դեպի բնության, շրջական միջավայրի, պատմամշակութային և սոցիալական ժառանգության պահպանությանը, վերատադրությանն ու զարգացմանը:

Ըստ Լոնդոնի Ircos MORI սոցիալական հետազոտությունների ինստիտուտի՝ 2008թ.-ի հարցման արդյունքների համաձայն՝ Եվրոպացինները, պլանավորելով իրենց հերթական արձակուրդը, կարևորում են մի շարք էկոլոգիական գործուներ՝ ըստ հետևյալ հերթականության՝

- մաքուր լողափ և ջուր,
- հանգստի գոտում և շրջակա տարածքներում աղբի բացակայություն,
- գյուղական վայրերում ուրբանիզացման դրսևորումների բացակայություն,

25 ՄԱԿ-ի Զբոսաշըրջության համաշխարհային կազմակերպությանը՝ UNWTO (United Nations World Tourism Organization), URL: www.unwto.org ՀՀ-ն անդամակցում է UNWTO-ին 1997թ.-ին լիիրավ անդամի կարգավիճակով: ՀՀ անդամակցության մասին որոշումը կայացվել է 1997թ. Ստամբուլում տեղի ունեցած ԶԿ 12-րդ Գլխավոր Սսամբթեայում: UNWTO-ի գործունեության հիմնական նպատակը համաշխարհային գրոսաշըրջության բնագավառի քայլականության և զարգացման ուղղությունների մշակումն է:

- հանգստի գոտում բնապահպանական ծառայության առկայություն,
- բացարձակ անաղմուկ միջավայր,
- էկոլոգիապես մաքուր սնունդ,
- հանգստի գոտում հարմարավետ և թիզ քանակությամբ տրանսպորտային միջոցների առկայություն,
- նպատակակետին ավտոբուսով կամ գնացքով հասնելու հնարավորություն, էկոլոգիապես մաքուր կացարան:

Կայուն գրոսաշրջության գլխավոր տնտեսական ներգործությունները մեկն այն ե, որ պետության բյուջեում կայուն պարբերականությամբ ավելանան արտարժույթի հոսքերը, ինչն էլ կնպաստի երկրում գործարար հնարավորությունների ընդլայնմանը և գրաղվածության մակարդակի բարձրացմանը:

Գյուղական գրոսաշրջությունը սերտորեն կապված է տեղի բնակչությանը տեղական գրաղվածության ապահովման հնարավորություններով:

Կայուն գրոսաշրջությունը կարող է նպաստել «զգայուն շրջակա միջավայրի» (sensible environment) պահպանմանը: Ընդունող երկիրը, կիրառելով գրոսայգիների, ազգային պարկերի և այլ պահպանվող տարածքների այցելավճարներ, ինչպես նաև՝ վաճառելով հատուկ հավատարմագրեր սեղմանին որտպ և ձկնորսությամբ գրաղվելու համար, ստանում է ուղղակի ֆինանսական մուտքեր երկրի բնապահպանական խնդիրների լուծման համար:

Կայուն գրոսաշրջությունը կարող է խթանել երկրում ենթակառուցվածքների բարելավմանը՝ ջրամատակարարման, կոյուղու, ճանապարհների, էլեկտրացանցերի, հեռախոսային ցանցերի, հանրային տրանսպորտի համակարգի աշխատանքներին: Մրանք և գրոսաշրջային նպատակների համար են ծառայում, և տեղի բնակչության (հատկապես գյուղական համայնքներում) կենսամակարդակի ամենավառ ցուցանիշն են հանդիսանում:

4.2 ԳՅՈՒՂԱԿԱՆ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԱԳԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԾՐՁԱԿԱ ՄԻԶԱՎԱՅՐԻ ՎՐԱ

Գյուղական տարածքներում գրոսաշրջության կազմակերպման համար բնական ռեսուրսների մեծածավալ շահագործումը, հյուրընկալության համար անհրաժեշտ շինությունների կառուցումը և գրոսաշրջության հետ կապված այլ գործունեությունների կազմակերպումը որոշ չափով բացասական ազդեցություն են ունենում շրջակա միջավայրի վրա: Այդպիսի ազդեցության աստիճանը կախված է գրոսաշրջիկների քանակից և կազմակերպիչների վարպետությունից, որոնք, հանգստի կազմակերպմանը զուգահեռ, հոգածություն պետք է դրսնորեն շրջակա միջավայրի հանդեպ:

Գյուղական գրոսաշրջություն իրականացնելու ժամանակ անհրաժեշտ է հետևողական ուշադրություն դարձնել բնական ռեսուրսներին և հնարավորին նվազեցնել նրաց վրա ոչ ցանկալի ազդեցությունը: Զբոսաշրջության այս տեսակը գյուղական համայնքներում եկամտաբերության լրացուցիչ աղյուր է համարվում, և նիշտ կազմակերպման պարագայում հրաշալի միջոց է գյուղական համայնքների կայուն զարգացման համար: Ոչ մասնագիտական մոտեցման արդյունքում առաջանում են շրջակա միջավայրի շահագործման հետ կապված մի շարք խնդիրներ, որոնցից ավելի ակնառու են ներքոնշյալ գործընթացները:

Գյուղական գրոսաշրջությունն այլ ծների հետ գուգորդելու ժամանակ հաճախ տեղի է ունենում խոտածածկ տարածքների դեգրադացիա: Զբոսաշրջային գործունեություն իրականացնելու հետևանքով առաջացած հողային կոշտացումից փոխվում է ֆլորայի և ֆաունայի կազմը և այլն: Այս ամենի պատճառ են դառնում նաև այցելուների ոչ նիշտ պահելաձնը, օրինակ՝ այցելուներն երթուղու նպատակակետին հասնելու համար շատ հաճախ շեղվում են հիմնական ճանապարհից և իրենց համար փնտրում ավելի մատչելի ուղիներ: Հարկ է նշել, որ չի խրախուսվում գրոսաշրջային ծառայություններ մատուցող հաստատությունների կառուցումը կուսական բուսականությամբ հարուստ շրջաններում:

Ոչ ցանկալի ազդեցությունը վայրի բնության վրա առաջանում է որսի և ծկնորսության հետևանքով, որը կրնատում է կենդանիների և ծկների որոշ տեսակների պոպուլիացիան: Զկնորսության և որսորդության կազմակերպման համար անհրաժեշտ է ընտրել միայն թույ-

լատրելի ժամանակահատվածներ: Հաճախ կենդանիներին անհանգստություն են պատճառում ոչ թե մարդիկ, այլ այն սարքավորումները, որոնք նրանք օգտագործում են հանգստի ժամանակ, օրինակ՝ կենդանիներին խիստ անհանգստացնում է ռադիոռենդունիչների և ավտոմոբիլային շարժիչների աղմուկը:

Բնության մեջ աղբի վնասակար ազդեցությունից խոսափելու միակ արդյունավետ միջոցը դրա կուտակմանը չնպաստելն է:

Չորսաշրջային գործունեության հետևանքով վերգետնյա ջրային ռեսուրսներն աղտոտվում են այն շրջաններում, որտեղ տեղակայվում են հյուրընկալության և հանգստյան տները, քեմփինգները և այլ հյուրանոցատիպ հանգրվանները: Այդ իսկ պատճառով համայնքներին կից հանգստավայրերում, որտեղ կան լներ, գետեր և այլ ջրային զանգվածներ հարկավոր է տարածքի մաքրումն անհետողական աշխատանքներ իրականացնել և գրոսաշրջային գործունեություն ծավալելիս դրսկորել աղբահանման ճիշտ վարքագիծ :

Գյուղական տարարածքի սանիտարական կարգավիճակի վրա ազդեցությունը անխուսափելի է: Չորսաշրջիկների կողմից թափված աղբն ու թափուներն առաջացնում են սանիտարական մեծ խնդիրներ: Առաջանում են օրգանական և անօրգանական թափուներ: Օրգանական թափուները հնարավոր է վերամշակել և գյուղական տարածքներում օգտագործել որպես պարարտանյութ, իսկ անօրգանական թափուների դեպքում խնդիրն այլ է: Անհրաժեշտ է գրոսաշրջիկներին արգելել բնության մեջ աղբ թափելը (գարեջրի 22եր, ծխախոտի տուփեր, պոլիէթիլենային տոպրակներ, կապրոն և 22եր, սննդի մնացորդներ և այլն):

Գյուղական տարածքներում գտնվում են հնեաբանական, պատմական և բնական ծագման բազմաթիվ հուշարձաններ: Շատ հաճախ այս օբյեկտները լրացնում են բնական էկոհամակարգերը: Բազմաթիվ հողատարածքներ, որոնք դեռևս ծևակորվել են հնագույն ժամանակներից, մեծ հետաքրքրություն են ներկայացնում և անցնուհատ ուսումնասիրվում են հնեաբանների, երկրաբանների կողմից: Դրանց միջոցով տեղեկություններ են հավաքվում տվյալ տարածքների բնորոշ ֆլորայի և ֆաունայի փոփոխության, հողային ծածկույթի կազմի փոփոխության վերաբերյալ: Գյուղական գրոսաշրջության ժամանակ դրանց օգտագործումն անխուսափելի է: Շատ խրախու-

սելի է, որ տուրերի կազմակերպիչները դրանք ընդգրկում են գյուղական գրոսաշրջության փաթեթների մեջ, բայց նաև նրանք աշակերտ հետևողականությամբ պետք է դրանց շղակայքում հանգիստը կազմակերպեն, քանի որ ոչ գրագետ վերաբերմունքը կարող է հանգեցնել անդառնալի հետևանքների:

Այսպիսով, գյուղական գրոսաշրջության կազմակերպման ժամանակ գյուղական տարածքների ոչ պատշաճ շահագործումը կարող է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցություն ունենալ: Դրանից խոսափելու համար՝ անհրաժեշտություն է առաջանում հանգիստ կազմակերպելուն գուգընթաց ծեռնարկել նաև ծրագրեր, որոնք, միաժամանակ, ուղղված կլինեն շրջակա միջավայրի պահպանմանն ու չաղտոտմանը:

4.3 ԳՅՈՒՂԱԿԱՆ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՄԻՋԱՎԱԿՈՒԹՅԱՅԻ ՀԱՍԱԳՈՐԾՎՈՒԹՅԱՆ ՄԻԳՈՅ

Շրջապատող աշխարհի մշակութային բազմազանության հետ հաղորդակից լինելը, նոր արժեքների ձեռք բերման, պահպանման ու փոխանցման անհագ ծգոտումը մարդուն դրդում է լինել միջմշակութային հաղորդակցման կիզակետում: Միջեթիվ շփոմների և հարաբերությունների հարանուն գործընթացը անխուսափելիորեն բերում է համայնքային, գյուղական և ավելի էթնիկ-կոլորիտային տեղանքների հանդեպ հետաքրքրվածության ավելացմանը:

Ակնհայտ է, որ հասարակությունը գարգանում է տարբեր ժողովուրդների և նրանց մշակույթների փոխադարձ կապերի ու փոխկապվածության ընդլայնման նաևապարհով: Այս գործընթացն իր վրա է կրում բոլոր երկրների հասարակական կյանքի տարբեր ոլորտները, այդ թվում նաև՝ գրոսաշրջության ոլորտը:

Ներկայումս անհնար է գտնել այնպիսի էթնիկ հասարակություններ, որոնք իրենց վրա չեն կրում ուրիշ ժողովուրդների մշակույթի ազդեցությունը: Մշակույթների փոխազդեցության գործընթացն ուղղված է նրանց միասնականացմանը: Ազգերի մոտ անհրաժեշտություն է առաջանում սեփական մշակութային արժեքների պահպանման, ինչն ավելի արտահայտված է գյուղական միջավայրում:

Գյուղական գրոսաշրջության զարգացման համար առիթ է հանդիսանում «օտար» կենցաղի, մշակույթի, սովորույթների հետ մեր-

ձենալու ծգտումները: Ընդհանուր կենցաղավարության ժամանակ առավել ակնհայտ են դառնում մշակութային առանձնահատկությունները: Առօրեական շիման մեջ այդ առանձնահատկությունները դառնում են ակնհայտ, և օտարերկրացիները, զբոսաշրջիկները սկսում են հասկանալ, որ գոյություն ունեն վարքագծի, ապրելակերպի, մտածելակերպի այլ ձևեր, որոնք եապես տարբերվում են իրենց սովորականից:

Առանձնահատուկ ազգային կոլորիտ ունեցող գյուղական բնակատեղում բազմազան տպավորությունները մարդու գիտակցության մեջ փոխակերպվում են սպասումների, որոնք դառնում են հասարակության մեջ նրա վարքագծի կարգավորիչները: Զբոսաշրջության ոլորտի գործընթացներում միջմշակութային շիման ժամանակ զբոսաշրջիկները միմյանց մասին որոշակի պատկերացումներ են կազմում, փոխադարձաբար կանխատեսում զրուցակցի վարքագիծը, ինչը հեշտացնում է օտարների շփումը՝ լեզուների, խոհանոցի, հագուստի, հասարակական վարվելաձևի կանոնների ծանոթացման և յուրացման ցանկության առաջացումը:

Այս ամենի արդյունքում յուրաքանչյուր աշխարհագրական թիրախային շուկայի համար ներկայացվում են պահանջարկին համապատասխանող զբոսաշրջային ուղղություններ՝ գերակշռելով գյուղական միջավայրում կազմակերպվող հանգիստ և մշակութային իրադարձությունների մասնակցություն: Վերջիններին նպատակն է ներկայացնել երկրի մշակութային ինքնատիպության առանձնահատկությունները, որոնց շնորհիկ պահպանվում է հետաքրքրվածությունն ու իրագեկվածությունը զբոսաշրջային նոր ուղրությունների հանդեպ և մեծանում է այցելության հավանականությունը:

4.4 ԳՅՈՒՂԱԿԱՆ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ ՈՐԴԵՍ ՏԱՐՍԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՏՈՒՐՓԱԹԵԹՆԵՐԻ ՄՐՅՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒ

Գլոբալիզացիայի դարաշրջանի ներկա փուլում օրինաչափ է դառնում տարածաշրջանային համագործակցության միտումների ուժեղացումը: Ի հայտ է գալիս մի գործընթաց, որը թելադրում է տրանսսահմանային նյութական, ֆինանսական և մարդկային հոսքերի ծավալների մեծացում, պետական սահմանների «պատնեշի» դերի

թուլացում, ոչ ֆորմալ և ֆորմալ համագործակցության ցանցի ծևավորում հարևան սահմանամերձ տարածաշրջանների սուբյեկտների միջև:

Զբոսաշրջության ոլորտում տարածաշրջանային համագործակցությունը խթանելու համար մշակվում են ռազմավարական ծրագրեր՝ հիմնված համատեղ գործողությունների վրա: Ոլորտում գործող բազմաթիվ փորձագետներ արդեն իսկ եկել են այն համոզման, որ այսօր անխուսափելի են միջտարածաշրջանային համագործակցության զարգացումները:

Դարձ է նշել, որ բազմաթիվ պետությունների ղեկավարների կողմից մեծ հետաքրքրության է արժանացել զբոսաշրջության սրբնաթագա զարգացումը, և միջազգային ատյաններում ավելի հաճախ են բարձրածայնվում ոլորտին վերաբերող հիմնահարցերը:

Զբոսաշրջությունը որպես տնտեսության նյուղ ոչ միայն կրում է տնտեսության մեջ տեղի ունեցող գործընթացների ազդեցությունը, այլև ունենում է եական ղեկավարություն ինչպես երկրների, այնպես էլ առանձին տարածաշրջանների տնտեսության զարգացման վրա: Ներկայումս զբոսաշրջության ոլորտում առկա են՝

- ոլորտում մատուցվող ծառայությունների ծավալի աճ,
- մրցակցության նպատակային ուղղվածություն,
- զբոսաշրջության վրա տնտեսական, սոցիալ-մշակութային գործունների, ինչպես նաև՝ շրջակա միջավայրի պահպանության աճ,
- զբոսաշրջային ապրանքի և ընտրված ծառայությունների նկատմամբ պահանջարկի աճ, ինչը հանգեցնում է ոլորտում նորարարությունների ներդրման անհրաժեշտությանը՝ ապահովելով ոլորտի ընդհանուր զարգացումը:²⁶

Տարածաշրջանային երթուղիների հիմնախնդիրներն այսօր շատ արդիական են, քանի որ համաշխարհային զբոսաշրջային շուկայում զբոսաշրջային արդյունքի խոշորագույն սպառողները նախընտրում են տարածաշրջանային զբոսաշրջային փարերներ: Տարածաշրջանային երթուղիները համարվում են զրուղական զբոսաշրջային պահպանակարային գործելակերպերի:

26 Ուկանյան Ա.Զ., Զբոսաշրջությունը որպես տարածաշրջանային տնտեսության զարգացմանը նպաստող ոլորտ, գիրք – Տնտեսության համաշաբաթ գրքագման հիմնախնդիրները ՀՀ-ում (գիտաժողովի նյութեր), Եղեգնաձոր, 2013,

Որպես նորարարական տուրապրանք տարածաշրջանային տուրֆաթեթները շեշտադրելով՝ բազմաթիվ երկրներ գրոսաշրջության ոլորտում իրենց պետական քաղաքականության նպատակներից են սահմանել համաշխարհային շուկայից ավելի մեծ թվով ժամանումների և ավելի շատ եկամուտների ներգրավումը։ Նաև կապես եթե այդ տարածաշրջաններում թիրախում են գյուղական համայնքների համաշխափ զարգացումը՝ գյուղական գրոսաշրջության կիրառման գործոնն էլ է դառնում ժամանակի հրամայական։

Այն երկրները, որոնք աշխարհագրորեն սահմանակից են, ունեն փոխկապակցված պատմական զարգացում և մոտ ազգային առանձնահատկություններ, գրեթե առանց բարդույթների ծևավորում են տարածաշրջանային փաթեթներ։ Նմանատիպ փաթեթները հիմնականում ընդգրկում են երկրի ծայրամասերի այցելավայրերը, փոքր քաղաքներն ու մերձքաղաքային համայնքները, ինչն էլ գյուղական գրոսաշրջության զարգացման հիմնական գրավականն է։

Տարածաշրջանային տուրերի կազմակերպման հետ կապված սահմանամերձ շրջաններում ի հայտ են գալիս մի շարք խոչընդոտներ, օրինակ՝ սահմանային անցակետերի սակավությունը, թույլ գրոսաշրջային ենթակառուցվածքները և այլն։

Իսկ տարածաշրջանային տուրերի առավելություններից են հանդիսանում համեմատաբար փոքր տարածքների վրա գոյություն ունեցող մշակութային, նյութական, ոչ նյութական և բնական ռեսուրսների եւկան տարբերությունները՝ ցուցադրավայրերի բազմազանությունը և այլն։

Տարածաշրջանային գրոսաշրջության կազմակերպման մեջ հաջողությունների հասնելու համար անհրաժեշտ է առաջնայնացնել թիրախային շուկաները՝ շարունակաբար ուսումնասիրելով դրանց զարգացման միտումները։

Տարածաշրջանային փաթեթներ ծևավորելիս պետք է նաև հաշվի առնել պետության դերակատարումը հարևանների փոխհարաբերություններում։ Եթե խոսքը վերաբերում է գրոսաշրջության ոլորտի պետական կարգավորման տնտեսական մեխանիզմներին, հիմնականում ելնում են այն դիտարկումներից, որ գրոսաշրջությունը, որպես բազմալորտային համակարգ, ավելի կարիք ունի կոորդինացման և կարգավորման, քան այլ ոլորտներ։

Տարածաշրջանային տուրփաթեթները ներկայում մեծ մասսայականություն չեն վայելում և նրանց իրագործման համար անհրաժեշտ է մեծ հետևողականություն։

Բնակչության կարգավիճակը, ազգային օրենսդրությունը, երկրի տնտեսական վիճակը, ինչպես նաև միջազգային համաձայնագրերն ազդում են գրոսաշրջության ոլորտում նորարարությունների ներդրման գործընթացին։ Զրոսաշրջային գործունեության մեջ դրանց ի հայտ գալու պատճառները յուրաքանչյուր երկրի համար լինում է տարբեր։ Սակայն ընդհանուրացրած տեսքով գրոսաշրջության ոլորտում նորարարական գործընթացների կառավարման առանձնահատկությունները հիմնվում են հետևյալ արժեքների վրա՝


- ծրագրավորում, գրոսաշրջության ոլորտի զարգացման բոլոր ծրագրերը պետք է համապատասխանեն շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման չափանիշների պահանջներին և չգերազանցեն կոնկրետ տարածքների համար սահմանված սոցիալական սահմանները,
- համագործակցություն, պետք է ծևավորել տարածաշրջանային գրոսաշրջային փաթեթներ և հավելյալ արդյունքներ, ծավալել աշխատանքներ գրոսաշրջային կազմակերպությունների հետ,
- յուրօինակություն, գործունեության մեջ պետք է ընդգծել յուրօրինակ, տարբերվող և եզակի ավանդույթներ, գրոսաշրջային արդյունքներ, գրավչություններ և այլն,
- մասնակցություն, նախատեսում է գրոսաշրջային արդյունաբերության ներկայացուցիչների և շահագրգիռ կողմերի ակտիվ մասնակցություն և ներգրավում,
- անվտանգություն, պետք է ապահովել անվտանգ երթևեկություն և կեցություն, առողջության պահպանում,
- ծախսերի չափ, գրոսաշրջիկները պետք է ստանան վճարված գումարին համապատասխան ծառայություններ,
- հարգանք, պետք է անհատական մոտեցում ցուցաբերել գրոսաշրջիկների կարիքներին և ակնկալիքներին համապատասխան։²⁷

27 Ուսկանյան Ա.Զ., Խնովացիաների ներդրումը գրոսաշրջության ոլորտում, գիրք – Տեղեկատվական տեխնոլոգիաներ և կառավարում, Գիտական հոդվածների ժողովածու, Երևան, 2010-1, էջ 75-82

Տարածաշրջանային տուրփաթեթների մրցունակության բարձրացման համար գյուղական գրոսաշրջությունը մեծ դերակատարություն կարող է ունենալ, քանի որ այն առանձնահատկությունները, որ տվյալ գյուղական տեղանքն է ընծեռում, նույնիսկ նույն երկրի հարակից շրջանի գյուղը չի կարող առաջարկել: Այստեղ հանգում ենք անսպառ և տարաբնույթ գրոսաշրջանին ռեսուրսների առկայությանը, որը շատ է գնահատվում գրոսաշրջիկի կողմից և բարձրացնում փաթեթի մրցունակությունը:

Մրցունակության բարձրացումը պայմանավորված է նաև սեզոնայնությամբ, ինչը գյուղական գրոսաշրջությունը հնարավորինս երկարաձգում է իրեն բնորոշ գործընթացներով, ավանդությունների և իրադարձությունների կազմակերպումով: Գյուղական գրոսաշրջության մեջ առավել քան կարևորվում է ազգային կողորիտը և ազգի արժեհամակարգը, ինչին հաղորդակից դառնալու ամենահավաստի ճանապարհը գյուղական գրոսաշրջիկ լինելն է:

Տարածաշրջանային փաթեթներում կարևորելով գյուղական գրոսաշրջության դերը և դրան միտված հեռանկարային զարգացման ծրագրերը՝ հարկավոր է իրականացնել շուկաների պարբերաբար հետազոտություններ բազմազան տվյալների հավաքմամբ, վերլուծմամբ, իսկ դրանց իրականացման գործընթացում ներգրավել տղնտեսական և քաղաքական բազմաթիվ հատվածներ:





ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

- «Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» ՀՀ օրենք, ընդունված 2003թ. դեկտեմբերի 17-ին, ՀՀՊԸ 2004/6 (305) 29.01.04
- «Առևտիք և ծառայությունների մասին» ՀՀ օրենք, ընդունված 2004թ. նոյեմբերի 24-ին, ՀՕ-134-Ն
- «Զբոսաշրջության զարգացման հայեցակարգից» բյուջե 2008-2012թթ. միջոցառումների ծրագրի՝ հաստատված 2008թ. հոկտեմբերի 16-ի կառավարության Սիստեմ N 1822-Ն արձանագրային որոշմամբ, բաժին III – Հայաստանում զբոսաշրջության զարգացման խոչընդունելով և մարտահրավերները
- Հայաստանի Հանրապետության 2012-2025թթ. հեռանկարային զարգացման ռազմական ծրագիր, Երևան, 2012, 180 էջ
- «Եյուրանոցային ծառայությունների մատուցելու կարգն ու պայմանները սահմանելու, հյուրանոցային տնտեսության օբյեկտների որակավորման ընթացակարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշում, 10 հունիսի 2004 թվականի N 946-Ն, ՀՀՊԸ 2004.07.21/39(338), Դոդ. 909
- Գայսան Ժաննա, Եկոտուրիզմը բնության հասուկ պահպանվող տարածքներում, Երևան, «Լուսակն» հրատ., 2007թ.
- Ուկանյան Ա.Զ., Հայաստանի Հանրապետության զբոսաշրջության ոլորտում ինտվացիոն գործունեության կառավարման հիմնախնդիրները, Ատենախոսություն, Երևան, 2014, 203 էջ
- Աղաջանյան Ա.Ս., Զբոսաշրջության ուղղմավարական կառավարման արդյունավետության բարձրացման հիմնախնդիրները (ՀՀ նյութերով), Ատենախոսություն, Երևան, 2013, 133 էջ
- Ուկանյան Ա.Զ., Զբոսաշրջության ոլորտում ինովացիոն գործունեության պետական աջակցությունը, գիրք – ԵԿՏՄ-ի գիտական հոդվածների ժողովածոր 2 (01), Երևան, 2013, էջ 202 – 210
- Ուկանյան Ա.Զ., Զբոսաշրջության ոլորտում ինովացիոն գործունեության զարգացմանը նպաստող ոլորտ, գիրք – Տնտեսության համաշափ զարգացման հիմնախնդիրները ՀՆ-ում (գիտաժողովի լուրերը), Եղեգնաձոր, 2013, էջ 79 – 83
- Ուկանյան Ա.Զ., Ինովացիաների ներդրումը զբոսաշրջության ոլորտում, գիրք – Տեղեկատվական տեխնոլոգիաներ և կառավարում, Գիտական հոդվածների ժողովածոր, Երևան, 2010-1, էջ 75-82
- Բալաբанова А.О., Основные особенности агротуризма в Германии, European researcher = Европейский исследователь. 2011 - № 1.
- Балабанова А.О. К вопросу о разработке общеобразовательных программ для развития сельского туризма. Известия Сочинского государственного университета. 2013. № 1-2 (24)
- Барановский Н.А., Агротуризм как форма стимулирования развития сельских территорий Украинского полесья, Это- и агротуризм: перспективы развития на локальных территориях: тезисы докл. II междунар. науч.-практ. конф., Баранович 2010
- Биржаков М.Б., Введение в туризм. Издание седьмое, переработанное и дополненное, Москва_Санкт-Петербург, Герда, 2009
- Вавилова Е.В., Основы международного туризма, Учебное пособие, Москва, Гардарики, 2005.

- «Воскресенский В.Ю., Международный туризм, Инновационные стратегии развития, Москва, ЮНИТИ, 2007, 159 с.
- Гойхман О.Я., Организация и проведения мероприятий, Учебное пособие, Москва, ИНФРА-М, 2008, 119 с.
- Дурович А.П., Организация туризма. Издание третье, стереотипное. Минск, 000 «Новое знание», 2006.
- Зорин И.В., Квартальнов В.А., Энциклопедия туризма. Москва, Финансы и статистика, 2004.
- Кравченко А.И., Культурология: Учебное пособие для вузов. -3-е изд., Москва, «Академический проект», 2001
- Сенин В.С., Организация международного туризма. Издание второе, Переработанное и дополненное. Москва, Финансы и статистика, 2004.
- Десятова Н.Н. Организация сельского туризма Калининград: Изд-во КГУ, 2011.
- Нуриахметова А.Ф., Устойчивое развитие агропромышленного комплекса. Экономика и менеджмент инновационных технологий. 2013 - № 6.
- Нуриахметова А.Ф., Важность качества обслуживания в курортных городах. Экономика и менеджмент инновационных технологий. 2013 - № 2.
- Камилова З., Агротуризм – альтернативный путь развития сельских территорий // АПК: экономика, управление. – 2009 -№4
- Барановский Н.А., Агротуризм как форма стимулирования развития сельских территорий Украинского полесья, Это- и агротуризм: перспективы развития на локальных территориях: тезисы докл. II междунар. науч.-практ. конф., Баранович 2010
- Балабанова А.О., Спрос на сельский туризм и отдельные его составляющие, Сочинский государственный университет, <http://ekonomika.snauka.ru/2013/12/3334>
- Chloe Lau, Tourism and Hospitality Studies - Meetings, Incentives, Conventions and Exhibitions (MICE), Hong Kong: Education Bureau, 2009.
- Handsruh Henryk, UNWTO, Meeting on the Development Implications of Tourism Services for Developing Countries: UNCTAD XII pre-event, Geneva, 19-20 November 2007.
- Voskanyan A., «Rural tourism as a means of improving the competitiveness of a country», ATA (American-Turkish-Armenian) Fellows. A Multilateral University Consortium to Strengthen Tourism Education, Research and Industry Outreach, Sustainable Tourism Issues, Conference of Tourism & Hospitality (97 pages), The Highway to Sustainable Regional Development, (only summaries are printed), Yerevan, 2013.

- http://dxttq4w60xqpw.cloudfront.net/sites/all/files/pdf/unwto_barom13_01_jan_excerpt_0.pdf
- <http://www.moi.aov.cv/tph/rural-tourism>
- <http://www.visitcyprus.com>
- <http://www.europeanrtcongress.org/en/index.php>
- Eurostat. 1998. Community Methodology on Tourism Statistics. European Commission. Luxembourg.
- Department for food and rural affairs. Tourism statistic. <http://www.gov.uk/government/collections/rural-economy>,
- French agency for tourism development (AFIT). <http://www.afit-tourisme.fr>
- «Наше общее будущее»: Доклад Международной комиссии по окружающей среде и развитию (МКОСР)»: Пер. с англ./Под ред. и с послесл. С. А. Евтеева и Р. А. Перелета/-М.: Прогресс, 1989 World Travel and Tourism Council. New Levels of Innovation in Sustainable Tourism, <http://www.wttc.org>
- http://ec.europa.eu/agriculture/rurdev/index_en.htm
- Rural development policy 2007-2013. http://ec.europa.eu/agriculture/mrdev/index_en.htm
- World Tourism Organization – UNWTO, «Tourism in the Green Economy», UNWTO Sustainable Development of Tourism Programme. December 2011. <http://www.sdt.unwto.org>
- Jürgen Ringbeck, Amira El-Adawi, Amit Gautam, «Green Tourism. A Road Map for Transformation», 2010 Booz & Company Inc. http://www.strategyand.pwc.com/media/file/Green_Tourism.pdf
- <http://www.green-tourism.com/>
- «Natural Capital Limited», The Green Tourism Agenda, Edinburgh, EH3 8JB, September 2002, http://fama2.us.es:8080/turismo/turismonet1/economia%20de%20turismo/turismo%20y%20medio%20ambiente/green_tourism_agenda.pdf
- Baltic County Holidays. Professional information [Էլեկտրոնային աղբյուր] URL: <http://www.celotajs.lv/en/news/list/p?3&lang=en>
- Определение агротуризма. Ассоциация развития агротуризма [Էլեկտրոնային աղբյուր], URL: <http://www.agritourism.ru>, <http://5p.ru/?p=308>
- <http://en.unesco.org/>
- <http://social-culture.ru/index.php?request=full&id=196>
- <http://www.unwto.org>
- <http://www.unwto.org>

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲԱԺԻՆ 1

ԳՅՈՒՂԱԿԱՆ ԶԲՈՍԱՀՐՁՈՒԹՅԱՆ ԷՒԹՅՈՒՆԸ	5
1.1 ԶԲՈՍԱՀՐՁՈՒԹՅԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՅԻԱԼ-ՏՏԵՍԱԿԱՆ ԴԱՍԱԿՐԴՈՒՄ	6
1.2 ԳՅՈՒՂԱԿԱՆ ԶԲՈՍԱՀՐՁՈՒԹՅԱՆ ԱՊԱԽԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	7
1.3 ԳՅՈՒՂԱԿԱՆ ԿԱԽԱԳ ԶԲՈՍԱՀՐՁՈՒԹՅԱՆ ԷՈՒԹՅՈՒՆԸ	10
1.4 ԳՅՈՒՂԱԿԱՆ ԶԲՈՍԱՀՐՁՈՒԹՅԱՆ ԿՄՊՆ ԱԳՐՈՏՈՒԹՅՈՒՆԻ ԵՎ ԵԿՈՏՈՒԹՅՈՒՆԻ ԵՏԸ	13
1.5 ԳՅՈՒՂԱԿԱՆ ԶԲՈՍԱՀՐՁՈՒԹՅՈՒՆԸ ԶԲՈՍԱՀՐՁՈՒԹՅԱՆ ՁԵՎԵՐԻ ԴԱՍԱԿՐԴՈՒՄ	16
ՄԵԶ	

ԲԱԺԻՆ 2

ԳՅՈՒՂԱԿԱՆ ԶԲՈՍԱՀՐՁՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԻՆ ՈԵՍՈՒՐՍՆԵՐԸ	29
2.1 ԳՅՈՒՂԱԿԱՆ ԶԲՈՍԱՀՐՁՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԻՆ ԴԱՄԱՐԱԿՈՒՄԸ ՄՊԱՍԱՐԿՈՒՄԸ ԵՆԹԱՀԱՍԱԿՈՒԹՅՈՒՆ	30
2.2 ԲԻՆԱԿԱՆ ՈԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԵՎ ՏԵՍԱՐձԱՆ ՎԱՅՐԵՐԻ ԴԵՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԶԲՈՍԱՀՐՁՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄՆ ՄԵԶ	40
2.3 ՏԱՐԱՏԵՍԱԿ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԶԲՈՍԱՀՐՁՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄՆ ՄԵԶ	43
2.4 ԳՅՈՒՂԱԿԱՆ ԶԲՈՍԱՀՐՁՈՒԹՅԱՆ ՄԵԶ ՆԵՐԳՐԱՎԿԱԾ ՄՊԱՍԱՐԿՈՂ ԱՋՆԱԿԱԶՄԸ	46

ԲԱԺԻՆ 3

ԳՅՈՒՂԱԿԱՆ ԶԲՈՍԱՀՐՁՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՅՄԱՆ ՓՈՐՁԸ ՄԻ ՇԱՐՔ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ	53
3.1 ՖՐԱՄԱՒՆ	54
3.2 ԻՏԱԼԻԱՆ	55
3.3 ԳԵՐԱՍԻՆԱՆ	56
3.4 ԳԵԼԻՆԱՆ	56
3.5 ՍԼՈՎԵՆԻԱՆ	57
3.6 ԿՊՈՊՈՍ	58
3.7 ՍԱԼԱԶԻԱՆ	59
3.8 ԴԱՅԱՍԱՆ	60

ԲԱԺԻՆ 4

ԳՅՈՒՂԱԿԱՆ ԶԲՈՍԱՀՐՁՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՅՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՇԵՈԱԿՐՄՆԵՐԸ	65
4.1 ԳՅՈՒՂԱԿԱՆ ԶԲՈՍԱՀՐՁՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԿԱՅՈՒ ԶԲՈՍԱՀՐՁՈՒԹՅԱՆ ԲԱՆԱԳՐԻԳ	66
4.2 ԳՅՈՒՂԱԿԱՆ ԶԲՈՍԱՀՐՁՈՒԹՅԱՆ ԱՊԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԾՐԶԱԿԱՆ ՄԻԶԱԿԱՅԻ ՎՐԱ	69
4.3 ԳՅՈՒՂԱԿԱՆ ԶԲՈՍԱՀՐՁՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՄԻՉԱՍԱԿՈՒԹՅՈՒՆ ԴԱՍԱԳՈՐԾԱԿՅՈՒԹՅԱՆ ՄԻԳՈՅՆ	71
4.4 ԳՅՈՒՂԱԿԱՆ ԶԲՈՍԱՀՐՁՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՏԱՐԱՏԵՍԱԿԻՆ ՏՈՒՐՓԱԹԵԹՆԵՐԻ ՄԵՅՈՒՄՆԿՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՅՄԱՆ ԳՈՐԾՈՒՆ	72

ՕԴԱԳՈՐԾՎԱԾ ԵՎ ԱՌԱՋԱԿՎՈՂ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՅԱՍԿ	80
ԵԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՂԲՅՈՒՆԵՐ	82

Երևան • 2015

Այսուհետու «ՏԵՂՄԱՆՈՒՅՆ» գործակության մասին
ՍԱՀ «ԺԱՏԱՎԵՐ» կիոնցութեան դրամական մասին

Գովհար Խաչատրյանը՝ հայության վայրի պահանջման
դաշտական գործության մասին պահանջմանը

Կառավարության առաջնաշտառագործության
առաջնաշտառագործության առաջնաշտառագործության

ԱՐԵՎԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ